

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՏԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐԾ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԾԱՂԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆԱՐԿ

«ԳԵՂԱԶԱՐԴ ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ-ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՊԱՐԱՊՄՈՒՆԲՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԾ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԾԱՂԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

«ԳԵՂԱՋԱՐԴ ՊԱՐՏԻՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ-ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱԱՀ

ԵՐԵՎԱՆ

2015

ՀՏԴ 635.9 (075.8)
ԳՄԴ 42.374 y 73
Գ 888

Ձեռնարկը տպագրության է երաշխավորել Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի գիտական խորհրդը

Գրախոսներ՝ կենս.գիտ.թեկնածու Ն.Գ.Ալեքսանյան
կենս.գիտ.թեկնածու Ա.Մ.Կարապետյան
կենս.գիտ.թեկնածու Ա.Ս.Ալեքսանյան

Մասնագիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ժ.Հ.Վարդանյան
խմբագիր՝ բանասիրա.գիտ.թեկնածու, դոցենտ Օ.Մ.Խաչատրյան

Գրիգորյան Արծ.Ա.

Գ 888 Ծաղկաբուծություն. Ուսումնական ձեռնարկ բարձրագույն ուսումնական
հաստատությունների «Գեղազարդ պարտիզագործություն» առարկայի լաբորատոր-
գործնական պարապմունքների համար: Արծ.Ա.Գրիգորյան. Եր.: ՀԱԱՀ, 2015, 80 էջ:

Ձեռնարկում ներկայացվում են տարբեր կենսաձև ունեցող ծաղկաբույսերի
համառոտ նկարագիրը, մշակության առանձնահատկությունները, բազմացման
մեթոդներն ու եղանակները և կիրառությունը զանազան ծաղկային ձևավորումներում
ու գեղարվեստական կոմպոզիցիաներում: Ձեռնարկում յուրաքանչյուր ծաղկատեսակ
ունի գունավոր լուսանկար: Ուսումնական ձեռնարկը օգտակար է ՀԱԱՀ անտառային
տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում մասնագիտության ուսանողների
ինքնուրույն, անհատական աշխատանքներ կատարելուն և լաբորատոր-գործնական
պարապմունքներ դասավանդելուն, ինչպես նաև կանաչապատող մասնագետներին:

ՀՏԴ 635.9 (075.8)
ԳՄԴ 42.374 y73

ISBN 978-9939-54-766-4

@ Գրիգորյան Արծ.Ա., 2015
@ Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 2015

Ներածություն

Ծաղիկը բնության կողմից մարդուն տրված պարգև է և խորհրդանշում է գեղեցկություն, որի համար էլ այն բոլոր ժամանակներում ու բոլոր երկրներում, ինչպես ուրախ, այնպես էլ տխուր օրերին եղել է մարդու ուղեկիցը: Ծաղիկները առաջին անգամ առաջացել են ծածկասերմ բույսերի մոտ և հանդիսանում են բազմացման օրգան: Ծաղիկները բազմազան են ու տարատեսակ, դրանք աչքի են ընկնում իրենց կառուցվածքով, ձևով, չափերով, գունային նրբերանգներով, խայտաբղետությամբ, բուրմունքով և շատ ու շատ այլ հատկանիշներով: Ուստի պատահական չէ, որ կանաչապատման գործընթացում բույսեր ընտրելիս առաջին հերթին հաշվի են առնում դրանց ծաղիկների գեղազարդ արժանիքները: Ծաղկաբույսերը, անկախ իրենց կենսաձևից, շնորհիվ ծաղկման ժամկետների ու երկարատևության, լրացուցիչ գեղազարդություն են հաղորդում ներքաղաքային կանաչ տնկարկներին՝ զբոսայգուն, պուրակին, բուլվարին և փողոցային տնկարկին: Բացի կանաչապատման մեջ օգտագործելուց ծաղիկներից պատրաստում են թարմ և չորացած ծաղկեփնջեր, ծաղկահարդարման բազմապիսի կոմպոզիցիաներ՝ իկեբանա, մորիբանա, օսիբանա, որոնցից յուրաքանչյուրը առանձնանում է իր ոճով ու ձևով: Ծաղիկներից շատերը հատկապես վայրի տեսակները, ունեն նաև օգտակար (ուտալիտար) նշանակություն, պիտանի են սննդարդյունաբերության, բժշկության, դեղագործության, ներկերի արդյունաբերության և այլ ճյուղերի համար: Հայաստանը, շնորհիվ բուսաշխարհագրական տեղաբաշխվածության, լեռնային ռելիեֆի և ուղղաձիգ, խիստ արտահայտված գոտիականության, չափազանց հարուստ է խոտաբույսերով, ունի 3200 տեսակ, դրանց շարքում շուրջ 700-ը գեղազարդ են: Դրանցից են վարդակակաչը, հիրիկը, մեխակը, զանգակածաղիկը, գարնանածաղիկը, սոխը, թրաշուշանը, ձնծաղիկը, քրքումը, աստղաշուշանը, արքայապսակը, անթառամը, երիցուկը, պուշկինիան, լեռպուղիան, շտերներգիան, հայկական շուշանը, բելալիան և այլն: Հայաստանի ֆլորայի մի շարք ծաղկաբույսերից տարբեր ժամանակներում հայրենական և արտասահմանյան սելեկցիոներները տրամախաչման ճանապարհով ստացել են բազմաթիվ հիբրիդներ ու սորտեր, որոնք լայն կիրառություն ունեն գեղազարդ պարտիզագործության մեջ: Ծաղկաբույսերը իրականում գեղազարդ խոտաբույսեր են, որոնք էվոլյուցիայի ընթացքում տարբեր կլիմայական պայմաններում գոյատևելու, հարմարվելու ժամանակահատվածում առաջացրել են 3 հիմնական կենսաձևեր՝ միանյաներ, երկանյաներ և բազմանյաներ: Ծաղկաբույսերը բազմանում են սերմերով կամ վեգետատիվ եղանակով, սակայն՝ երբեմն, պայմանավորված տեսակի կենսաձևով կամ ցեղային պատկանելությամբ, կարող են բազմանալ որոշակի յուրահատկություններով, որոնց պարզաբանումները տրվում են առանձին ծաղկատեսակների բնութագրություններում:

Ռեսուրսական ձեռնարկում հանգամանորեն նկարագրվում են ՀՀ բնակավայրերի ներքաղաքային կանաչ տնկարկներում հաճախակի օգտագործվող և հեռանկարային 74 ծաղկատեսակ, լուսաբանվում դրանց աճման, զարգացման, ծաղկման, բազմացման, խնամքի առանձնահատկությունները, ինչպես նաև օգտագործման հնարավորություններն ու յուրահատկությունները:

Լաբորատոր-գործնական պարապմունք 1

Ծաղկաբուծության մեջ օգտագործվող հողերը և հողախառնուրդները

Գեղազարդ, ծաղկատեսակները, շնորհիվ իրենց կենսաբանական առանձնահատկությունների, բավականաչափ զգայուն են և պահանջկոտ հատկապես հողերի նկատմամբ: Դրանց մի մասը (բեզոնիա, սենպոլիա, գլոքսինիա, խորդենի, պտեր, ականջօղ, քրիզանթեմ, արջտակ և այլն)՝ լավ է աճում թույլ թթվային հողերում, մեկ ուրիշ խումբ (նագվարդ, մոմաբաղեղ, դրախտավարդ, մրտավարդ, կամելիա և այլն)՝ թթու հողերում, հաջորդ խումբ բույսերը (գարնանածաղիկ, ակոնիտ)՝ չեզոք կամ թույլ հիմնային հողերում, մեկ այլ խումբ բույսեր (ծնեբեկ, մեխակ, շուշան, մոխրածաղիկ և այլն)՝ հիմնային հողերում: Հաշվի առնելով այս առանձնահատկությունները՝ ծաղկաբուծության մեջ ընդունված է (մանավանդ ծածկած գրունտում) պատրաստել և օգտագործել տարբեր հողախառնուրդներ, որոնք այս կամ այն չափով կարող են բավարարել բույսերի հիմնային կամ թթվային պահանջը: Ցանկացած ծաղկաբուծական տնտեսություն իր կարիքների համար պետք է ունենա հետևյալ հողերը և հողախառնուրդները՝ սևահող, այգու կամ բանջարանոցային հող, տերևահող, ճմահող, կոմպոստ, փտած գոմաղբ և ավազ:

Ծնահող – ծանր հիմնային հող է՝ կազմված գրեթե բոլոր տեսակի հողերից, ծակոտկեն է, սակայն հակում ունի խտանալու և բավական հարուստ է սննդային նյութերով: Ծնահող պատրաստելու ամենալավ ժամանակը Հայաստանի պայմաններում հունիս ամիսն է, երբ մարգագետիններում խոտածածկը զգալի բարձր է: Ծնահող ստանալու համար մարգագետիններից կտրում առանձնացնում են 10-15սմ հաստություն, 25-30սմ լայնություն ունեցող քառակուսի հողակտորներ (ճիմ), ապա տեղափոխում պարտիզագործական տնտեսություն, որտեղ ցանկացած հարթ տեղում ճիմերը շարում են այնպես, որ կանաչ կողմերը նստեն իրար վրա, որից հետո առաջին շարքի վրա 2-3սմ շերտով փռում են թույլ կրային խառնուրդով գոմաղբ: Նույն կարգով մոտավորապես 1,5մ լայնության ճմակույտը բարձրացնում են 1-1,5մ: Ամռան ամիսներին խորհուրդ է տրվում ճմակույտը մի քանի անգամ խոնավացնել: Կույտավորելուց 3 ամիս հետո անհրաժեշտ է զանգվածը բահով լավ խառնել և ճիմերը մանրացնել: Նման ձևով մշակելու դեպքում նոյեմբեր ամսին առաջացած ճմահողը պիտանի է օգտագործման:

Տերևահող - հողի այս տեսակը պատրաստում են նախօրոք փորած փոսերում ծառաբույսերից թափված տերևները փտեցնելով: Դրա համար աշնանը կամ գարնանը այգիներից կամ անտառից հավաքում են թափված տերևները, լցնում փոսերը և խոնավացնում, այդպես թողնում 2 տարի: Փտելու, նեխելու երևույթները արագացնելու համար խորհուրդ է տրվում մի քանի անգամ գոմաղբահեղուկով խոնավացնել տերևային զանգվածը և եղանով թեթևակի խառնել, որ օդը թափանցի ներքին շերտերը: Այս պայմաններում 2-րդ տարվա վերջում տերևահողը պատրաստ է օգտագործման: Տերևահողը շատ փխրուն ու թեթև է լայն կիրառուփյուն ունի ծաղկաբուծության մեջ, հատկապես այն բույսերի համար (բեզոնիա, գարնանածաղիկ, գլոքսինիա, արջտակ և ուրիշներ), որոնց համար նախընտրելի չէ փտած գոմաղբը:

Տորֆահող - տորֆահողը բնության մեջ առաջանում է ճահճուտներում՝ տորֆի քայքայումից ու փտումից: Ծաղկաբուծական տնտեսություններում տորֆահող ստանալու համար տորֆից կույտեր են պատրաստում և թողնում 2 տարի: Քայքայումն արագացնելու համար խորհուրդ է տրվում այդ ժամանակահատվածում կույտը հաճախակի խոնավացնել երբեմն՝ կրով հարստացված գոմաղբահեղուկով և խառնել, դրանից հետո տորֆահողը լիովին պատրաստ է լինում օգտագործման: Տորֆահողը թեթև է, փխրուն և թթու, այն խառնելով ցանկացած տիպի հողին՝ բարելավվում են վերջինիս որակական հատկանիշները: Տորֆահողը անփոխարինելի է մի շարք ծաղկային կուլտուրաների համար. դրանցից են՝ պտերը, խլորձը, մրտավարդը, կամելիան, դրախտավարդը, լեռնավարդը և այլն:

Փտած գոմաղբ - ծաղկաբուծական տնտեսություններում ջերմոցները տաքացնելու համար բերված գոմաղբը իր գլխավոր նպատակին ծառայեցնելուց հետո փտեցնում են՝ ամռանը ջերմոցը երկու անգամ լցնելով ջրով: Կանոնավոր այրման պայմաններում ուշ աշնանը գոմաղբը փտում է և օգտագործելու համար դառնում պիտանի: Այս հողախառնուրդը թեթև է, փխրուն և չափազանց սննդարար:

Կոմպոստ - այս հողախառնուրդը պատրաստվում է զանազան նյութերի (տնային աղբ, կենդանական աղբ, բուսական մնացորդներ, ոսկոր, մոխիր և այլն) փտումից: Կոմպոստ ստանալու համար ծաղկաբուծական տնտեսություններում վերը թվարկված նյութերը, խառնելով կրի հետ, կուտակում են հարմար տեղում՝ 10-15 սմ հաստության շերտով, ապա ծածկում հողի բարակ շերտով և այդպես շարունակելով՝ կույտի բարձրությունը հասցնում են մինչև 1-1,5 մետրի: Տարին մի քանի անգամ խորհուրդ է տրվում կույտը խառնել և խոնավացնել: Այսպիսի պայմաններում 3-4 տարի հետո կոմպոստը պատրաստ է լինում օգտագործման:

Ավազ - ծաղկաբուծության մեջ հողերը թեթևացնելու, խոնավությունը կարգավորելու, ինչպես նաև բազմացման աշխատանքները հեշտացնելու համար օգտագործում են տարբեր տեսակի ավազներ (պերլիտ, կարմիր ավազ, գետի ավազ, սպիտակ ավազ և այլն): Երբ ավազը խառնում են հողին, վերջինս դառնում է փուխր, ջրաթափանց, որն էլ կարգավորում է արմատների շնչառությունը: Ավազի մեջ բույսերի արմատակալումը զգալիորեն հեշտանում է. շատ դեպքերում, ավազը խառնելով մանր սերմերին, կատարում են ցանք: Ավազային հողերում շատ սոխուկավոր բույսեր (վարդակակաչ, շուշան, հակինթ) և պալարասոխուկավոր բույսեր (թրաշուշան, քրքում, հիրիկ) առավել փարթամորեն են աճում ու զարգանում:

Ծաղկաբուծության մեջ՝ մասնավորապես ծաղկային տարբեր տեսակի ձևավորումներում, բացի վերոհիշյալ հողերից հաճախակի օգտագործվում է հողախառնուրդ՝ պատրաստված հետևյալ բաղադրությամբ ու հարաբերությամբ՝ սևահող 3-4 մաս, տորֆահող 1 մաս, կարմիր ավազ 1 մաս, փտած գոմաղբ 0,5 մաս:

Լաբորատոր-գործնական պարապմունք 2

Ծաղկաբուծական տնտեսություններ

Բարեխառն գոտու կլիմայական պայմաններում ծաղկաբուծությունը՝ պայմանավորված ծաղկաբույսերի տարբեր բուսածնան գոտիների պատկանելությամբ կազմակերպվում ու իրականացվում է ինչպես բաց, այնպես էլ ծածկած հողատարածքներում(գրունտներում):Մերձարևադարձային, արևադարձային ծագման ծաղկաբույսերի մշակումը,բազմացումը և պահպանությունը իրականացվում է ջերմոցներում ու ջերմատներում:

Ջերմոց- մի կառույց է, որտեղ վաղ գարնանն իրականացնում են ծաղկատեսակների սերմերի ցանք,ծաղկասածիլների աճեցում, թաղարային ծաղկաբույսերի կտրոնավորման աշխատանքներ ու պահպանում:Ջերմոցներն ըստ բնույթի, լինում են փոսավոր և վերգետնյա:Դրանք կառուցվում են քարից կամ բետոնից և ուղղված լինում հյուսիսից հարավ,որոնք ունենում են 20-25մ երկարություն, 2մ լայնություն և պայմանավորված տաքացման եղանակից՝ 70-120սմ խորություն,իսկ միջջերմոցային տարածությունները շուրջ 80սմ խորություն:Փոսավոր ջերմոցները ծածկում են 1մ լայնության ապակեպատ շրջանակներով, իսկ վերգետնյա ջերմոցները՝ պոլիէթիլենային թաղանթով: Մեր հանրապետությունում ջերմոցները տաքացվում են էլեկտրական հոսանքով, տաք ջրով, տարբեր տեսակի վառարաններով և գոմաղբով,որը տնտեսապես էժան է և ձեռնատու:

Ջերմատուն- կապիտալ ապակեպատ կառույց է, որը ծառայում է տվյալ տարածաշրջանում բնականորեն չաճող մերձարևադարձային և արևադարձային բուսատեսակներ աճեցնելու, բազմացնելու և պահպանելու համար: Կան ջերմատներ, որոնք ունեն արտադրական նշանակություն և զբաղվում են առանձին կուլտուրաների (մեխակ, փողաշուշան, գերբերա, վարդ) աճեցմամբ:Ջերմատները նույնպես կառուցվում են հյուսիսից հարավ՝ աննշան (15⁰) շեղությամբ դեպի հարավ-արևելք, որպեսզի դրանցում աճող բուսատեսակներն հավասարաչափ ստանան ինչպես ջերմություն, այնպես էլ լույս: Ջերմատների պատերը կառուցվում են քարից, բետոնից կամ աղյուսից,որոնց վրա էլ հավաքվում են մետաղական տարբեր ձևի ու կառուցվածքի ապակեպատ հիմնակմախքներ: Ջերմատները ունենում են 3-10մ լայնություն, 3- 9մ բարձրություն և 15-40(50)մ երկարություն: խորհուրդ է տրվում ջերմատանը պահպանել այնպիսի բուսատեսակներ, որոնք գտնվում են հարաբերական հանգստի շրջանում, կամ՝ վաղ ծաղկեցման փուլում, բացի այդ, դարակների տակ կարելի է տեղադրել դատարկ թաղարներ, ծաղկարկղներ, հողախառնուրդ և այլն:Ջերմատները,լինում են միալանջ, երկլանջ, բազմալանջ (բլոկային) և անգարային:

Բաց գրունտի ծաղկաբուծությունը զբաղվում է տեղածին և ներմուծված տարբեր կենսաձև ունեցող ծաղկատեսակների աճեցման, զարգացման, բազմացման, կլիմայավարժեցման, ինչպես նաև նոր սորտերի ու հիբրիդների ստացման աշխատանքներով,որոնք իրականացվում են ծաղկային կուլտուրաների հավաքածու հողամասում:Այստեղ աճում ու զարգանում են տեղածին ու ներմուծված օտարածին

այն բոլոր ծաղկատեսակները, որոնք գեղազարդ են, հեռանկարային և ունեն լայն կիրառություն կանաչապատման բնագավառում: Բազմացման նպատակով այս հողամասում վեգետացիայի ընթացքում պարբերաբար հավաքվում են սերմեր, սոխուկներ, պալարներ, կոճղարմատներ և կտրոններ: Ծաղկաբույսերի հավաքածու հողամասում տարանջատում են միանյա, երկամյա, բազմամյա ծաղկաբույսերի հողատարածքները և ըստ առանձին տեսակների ու սորտերի, տեղաբաշխում ծաղկաբույսերը: Որպեսզի ծաղկաբույսերի հավաքածուներում բացառվեն անցանկալի տրամախաչումները և հավաքվեն բարձր որակի էլիտային սերմեր, անհրաժեշտ է՝ միևնույն ծաղկատեսակի սորտերի ու հիբրիդների մարգերը գտնվեն միմյանցից մոտավորապես 50մ հեռավորության վրա:

Ծաղկաբուծական տնտեսություններում գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները մասնակցելով, սերմերի հավաքման, մաքրման, մշակման, ցանքի, նոսրացման, տարբեր տեսակի ծաղկաբույսերի բազմացման աշխատանքներին, ճանաչում են ծաղկաբույսերը և հարստացնում իրենց գործնական գիտելիքները ծաղկաբուծության բնագավառում:

Լաբորատոր-գործնական պարապմունք 3

Ծաղկաբույսերի բազմացումը և ցանքսը

Ծաղկատեսակները հիմնականում բազմանում են սերմերով, որոշ տեսակներ՝ նաև վեգետատիվ ճանապարհով: Սերմնային բազմացման ժամանակ կարևոր նախապայման է ունենալ առողջ, կենսունակ և թարմ սերմեր: Ծաղկային կուլտուրաների սերմերը վեգետացիայի ընթացքում պարբերաբար հավաքվում, չորացվում, մաքրվում և պահպանվում են թղթից կամ կտորից պատրաստված պարկերում: Նախքան ցանքը, ըստ առանձին տեսակների և սորտերի, որոշվում է դրանց լաբորատոր և դաշտային ծլունակությունը, ծլման էներգիան, մաքրությունը և տնտեսական պիտանելիությունը: Անհրաժեշտության դեպքում սերմերն ախտահանվում են, ենթարկվում ստրատիֆիկացիայի կամ հատուկ մշակման: Ծածկած գրունտի պայմաններում ցանքը կատարվում է հատուկ ծաղկարկղներում, թաղարներում, դարակներում կամ ջերմոցներում հունվար-մարտ ամիսներին: Բազմամյա ծաղկատեսակների սերմերը ցանում են ավելի վաղ՝ հունվարին, քանի որ դրանց ծլման ժամանակահատվածը երկար է և տատանվում է 25-40 օրվա սահմաններում, իսկ միամյաները ծլում են կարճ ժամանակահատվածում՝ 5-12 օրում, այդ պատճառով էլ դրանք ցանում են մարտի սկզբին: Ծաղկային բույսերի ցանքը թե՛ բաց, թե՛ փակ գրունտում կատարվում է 2 եղանակով՝ շաղացան և շարքացան: Եթե սերմերը շատ մանր են, խորհուրդ է տրվում խառնել ավազին կամ հողախառնուրդին և ապա ցանել: Սերմերը ցանելուց հետո մանր անցքեր ունեցող մաղերով, ելնելով սերմի չափից, 0,5 -1,0 սմ շերտով ծածկում են հողով, այնուհետև հարթ տախտակով տափանում, որից հետո մանր անցքեր ունեցող ցնցուղով խոնավացնում արկղները: Սերմերի ծլումից հետո, երբ առաջանում են 1-2 իսկական տերևներ, անհրաժեշտ է կատարել նոսրացում: Բաց գրունտում կարելի է ցանել արագ ծլող, զարգացած առանցքային արմատներ ունեցող (լյուպին, ոջլախոտ, կակաչ), կամ դիմացկուն (մարգիզ, մլուկխոտ, շահպրակ, էնոտերա) ծաղկատեսակները: Բաց գրունտում սերմերի ցանքը հիմնականում կատարվում է գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներին: Որոշ դիմացկուն տեսակներ կարելի է ցանել նաև ուշ աշնանը՝ նոյեմբերին: Ծաղկաբուծության մեջ ծաղկատեսակների վեգետատիվ բազմացումը իրականացվում է կտրոններով, տերևներով, թփի բաժանունով, բեղիկներով, անդալիսով, կոճարմատներով, պալարներով, սոխուկներով և պալարասոխուկներով: Կտրոնային բազմացման ժամանակ կտրոններ վերցնում են գլխավորապես ցողունից (վարդ, գեորգենի, սանթուին, ականջօղ, ալտերմանթեր, երեմ, քրիզանթեմ), ինչպես նաև տերևից (սենպուլիա, գլոքսինիա, բեզոնիա, կոլերիա, կլեյմիս): Ծաղկաբույսերից շատերը հաջողությամբ բազմանում են ուղղակի թուփը կիսելով, որը հատկապես ծերացած թփերի դեպքում, երիտասարդացնում է բույսին, նման եղանակով են բազմանում բոցենին, երիցուկը, ծնեբեկը, աստղածաղիկը, ոսկեշիվը, մարգարտածաղիկը, կուսածաղիկը, գարնանածաղիկը, ոսկեդեմիկը, չիսիմը և այլն:

Ծաղկաբուծության մեջ ծաղկատեսակների սերմերի ցանքսը վեգետացիայի ընթացքում հաճախ իրականացվում է մի քանի անգամ, հատկապես կոնտեյներային եղանակով, որպեսզի անհրաժեշտության դեպքում նույնիսկ ամռան ամիսներին լինեն ծաղկասածիլներ:

Լաբորատոր-գործնական պարապմունք 4

Ծաղկաբույսերի կենսաձևերը

Բուսական յուրաքանչյուր օրգանիզմ, աճելով ու զարգանալով էկոլոգիական տարբեր պայմաններում, էվոլուցիայի ընթացքում ձեռք է բերում համապատասխան հարմարվողական հատկանիշներ, որոնց շնորհիվ ձևավորվում են բույսի արտաքին տեսքը և կենսունակությունը: Համաձայն հոլանդացի բուսաբան Ռաուենկիերի դասակարգման, որի հիմքում ընկած է բույսի վերականգնող բողբոջների դասավորությունը հողի մակերևույթի նկատմամբ, բույսերը ստորաբաժանվում են 5 կենսաձևերի՝ ֆաներոֆիտների (ծառեր, թփեր, բնափայտային լիաններ, էպիֆիտներ), հեմիկրիպտոֆիտների (բազմամյաներ, երկամյաներ), կրիպտոֆիտների (գեոֆիտներ, հիդրոֆիտներ), քանեֆիտների (սողացող, բարձիկանման խոտաբույսեր, թփիկներ, կիսաթփեր) և տերոֆիտների (միամյաներ): Խոտաբույսերը և ծաղկաբույսերը ընդգրկված են հեմիկրիպտոֆիտներ, կրիպտոֆիտներ և քանեֆիտներ կենսաձևերում, որոնց կանդրադառնանք հետագա բաժիններում:

Բազմամյաներ

Ինչպես նշվեց վերևում, բազմամյաները դասվում են հեմիկրիպտոֆիտների կենսաձևին, որոնց վերականգնվող բողբոջները գտնվում են հողի մակերեսին կամ դրա վերին շերտին: Հեմիկրիպտոֆիտները ստորաբաժանվում են 3 խմբի՝ առանցքաարմատավորների, փնջարմատավորների և կոճղարմատավորների: Բազմամյա ծաղկաբույսերը նույն տեղում աճում ու զարգանում են երկար տարիներ, դրանք դիմացկուն են հողի և կլիմայական գործոնների նկատմամբ, հաջողությամբ բազմանում են սերմերով և վեգետատիվ ճանապարհով: Բազմամյա ծաղկաբույսերի միակ թերությունը ծաղկելու կարճ տևողությունն է, որը գերակշռող տեսակների մոտ կազմում է 15-40 օր, բացառություն են կազմում որոշ տեսակներ (գայլարդիա, քրիզանթեմ, բոցենի, ռուբեկիա), որոնց ծաղկումը տևում է 2-3 ամիս, երբեմն ավելի: Բազմամյա ծաղկաբույսերը՝ ըստ կենսակերպի, լինում են

Առանցքաարմատավորներ- ունեն ուժեղ զարգացած և խորը թափանցող միառանցքանի կամ երկառանցքանի արմատներ: Դրանցից են՝ լուպինը, աստղածաղիկը, երիցուկը, բազմամյա զանգակածաղիկը, լիխնիսը, կակաչը ռուբեկիան և այլն:

Փնջարմատավորներ- չունեն գլխավոր արմատ, դրանց արմատային համակարգը կազմում են երկրորդական կարճացած փնջանման արմատները: Դրանցից են՝ գարնանածաղիկը, մարգարտածաղիկը, եռագույն մանուշակը, բազմամյա վառվռուկը, արմերիան, մանուշակը, մեխակը, քրիզանթեմը և այլն:

Կոճղարմատավորներ- երկրորդական արմատները հաստանում և նմանվում են կարճ կամ երկար կոճղանման գոյացությունների: Դրանցից են՝ հիրիկը, քաջվարդը, հովտաշուշանը, կանան, փողաշուշանը, գեղորաշուշանը, չխիմը, ջղաշուշանը, արմավաշուշանը և այլն:

Պալարավորներ- արմատները հաստանում, վերածվում են պալարների և բույսի կյանքում կատարում նույն դերը, ինչ որ սոխերն ու կոճղարմատները: Դրանցից են՝ գետրգինան, քրքունը, թաղթը, բեգոնյան, հողմածաղիկը, անձխոտը և այլն:

Պալարակոճղարմատավորներ- այս խմբում ընդգրկված են այն ծաղկաբույսերը, որոնց արմատային համակարգը միջանկյալ տեղ է զբաղեցնում պալարավոր և

կոճղարմատավոր ծաղկաբույսերի միջև: Դրանցից են՝ ոսկեղնիկը, գեորգինաի որոշ տեսակներ, ջրնկալը, խոլորձը, դաքսիլորիզան և այլն:

Սոխուկավորներ-այս խմբում ըդգրկված ծաղկաբույսերի արմատների դեր են կատարում սոխերը, որոնք ձևափոխված ստորգետնյա ցողուններ են: Սոխերը ունեն հյութալի տերևներ և ծառայում են որպես սննդանյութերի շտեմարան: Դրանցից են՝ վարդակակաչը, շուշանը, հակինթը, պուշկինյան, մկնասոխը, աստղաշուշանը, նարգեսը, գեղազարդ սոխերը, ձնծաղիկը, շնդեղը և այլն:

Պալարասոխուկավորներ-այս խմբում ընդգրկված ծաղկաբույսերը միջանկայլ տեղ են զբաղեցնում սոխուկավոր և պալարավոր ծաղկաբույսերի շարքում: Դրանցից են՝ մերենդերան, նարգեսը, շտերնբերգիան, կնիֆոֆիան, արքայապսակը և այլն:

Երկամյաներ

Երկամյաները նույնպես հեմիկրիպտոֆիտներ են: Տիպիկ երկամյաներ ծաղկաբուծության մեջ գրեթե գոյություն չունեն, բացառություն է մատնոցուկը: Դրանք ըստ էության բազմամյաներ են, ուղակի ի տարբերություն վերջինների՝ կարող են լավ աճել և ծաղկել՝ սկսած ցանքի առաջին տարվանից, մինչդեռ 3-րդ տարվանից նրանց մոտ կտրուկ նվազում է ծաղկման արդյունավետությունը, հետևաբար՝ նաև գեղազարդությունը: Երկամյա ծաղկաբույսերից են՝ եռագույն մանուշակը, մորուքավոր մեխակը, մարգարտածաղիկը, էնոտերան, տուլտավարդը, որոշ զանգակածաղիկներ և այլն:

Միամյաներ

Միամյա ծաղկաբույսերը, մեկ վեգետացիայի ընթացքում սերմից ծլելով, աճում, զարգանում և սերունդ են ապահովում: Հարկ է նշել, որ իսկական միամյաներից բացի՝ ծաղկաբուծության մեջ առանձնացվում են «պայմանական միամյաներ», որոնք, հարավային ծագում ունեցող բազմամյա ծաղկաբույսեր են և բարեխառն գոտու կլիմայական պայմաններում ձմռանը ցրտահարվելով՝ դառնում են միամյաներ: Այդպիսի բույսերից են կանան, աղավնիձը, ծխածաղիկը, շանբերանը, շահպրակը, անծերին, լոբելիան, և այլն: Պայմանական միամյաները, ի տարբերություն բազմամյա ծաղկաբույսերի, որոնք սովորաբար ծաղկում են երկրորդ տարում, բարեխառն գոտում ծաղկում են այնպես, ինչպես միամյաները: Միամյա ծաղկաբույսերը մեր պայմաններում սկսում են առատ ծաղկել մայիսից մինչև կայուն ցրտերի հաստատվելը: Դրանցից շատերը արձակում են դուրեկան հոտ, աչքի են ընկնում ծաղիկների գունային բազմազանությամբ, մեծ մասն ունի լիաթերթ ծաղիկներ, շատերը դիմացկուն են թունավոր գազերի նկատմամբ:

Լաբորատոր-գործնական պարապմունք 5

ԿԱՆԱԶ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԶԱՐԴԵՐԸ

Ներքաղաքային կանաչ տնկարկներում (գբոսայգի, պուրակ, բուլվար և փողացային տնկարկ) վեգետացիոն ժամանակաշրջանում անփոխարինելի են ծաղկային ձևավորումները, որոնք, շնորհիվ իրենց տարատեսակության, յուրօրինակ դիզայնի ու ծաղիկների գունագեղության, զարդարում են քաղաքային տնկարկները, միաժամանակ գեղագիտական բավականություն պատճառում այցելուներին: Քանի որ ծաղկային ձևավորումները բնույթով և կառուցվածքով իրարից զգալիորեն տարբեր են, ուստի նրանցից յուրաքանչյուրի նախագծման և ձևավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել վերջինիս տեղադրությունը, ընտրել այնպիսի ծաղկատեսակներ, որոնց օգտագործմամբ չեն խախտվի գեղարվեստական կոմպոզիցիայի սկզբունքները: Ծաղկային ձևավորումների հիմնական տեսակներն են՝ ծաղկաթումբը, պարտերը, ածուն, խառը ածուն, առանձնյակը, արաբանախշը և ծաղկերիզը (զարդերիզ):

Ծաղկաթումբ



Ծաղկաթմբերը երկրաչափական զանազան պատկերներ (օվալ, շրջան, քառակուսի, եռանկյուն, բազմանկյուն, ուղղանկյուն) հիշեցնող տարբեր մեծության ինքնատիպ, գեղեցիկ ծաղկային փնջեր են, որոնք հիմնադրվում են հրապարակներում, սիզամարգերում, փողոցների խաչմերուկներում, պարտերային ձևավորումներում երբեմն՝ մինչև 20 աստիճան թեքության կանաչ տնկարկներում: Ծաղկաթմբերը դիտարժան դարձնելու համար խորհուրդ է տրվում դրա կենտրոնը արհեստական ճանապարհով բարձրացնել մինչև 2-3 աստիճան, երբեմն էլ՝ գեղազարդ քարերի կամ այլ շինանյութերի միջոցով ծաղկաթմբին տալ հարկայնություն: Ծաղկաթմբերում օգտագործվում են միամյա, երկամյա, բազմամյա, գորգային, տերևագեղազարդ բազմապիսի ծաղկատեսակներ, հաճախ էլ որպես սոլիտեր՝ ջերմատնային (պերճածաղիկ, արմավենի, վիշապածառ, բանան) և մշտադալար (տոսախ, իլենի, թույա, գիհի), մի շարք բուսատեսակներ: Հարկ է նշել,

որ արևադարձային բույսերը մեր պայմաններում աշնանը՝ մինչև կայուն ցրտերի երևալը, անհրաժեշտ է տեղափոխել փակ գրունտ: Գեղազարդ պարտիզազործության մեջ ծաղկաթմբի կենտրոնում չի բացառվում քանդակի կամ մանր ճարտարապետական ձևի կիրառումը: Ծաղկաթմբերը պայմանականորեն լինում են ծաղկային կամ գորգային: Գորգային ծաղկաթմբերում օգտագործվում են կարճահասակ, տարբեր երանգներ ունեցող բույսեր (թանթռնիկ, ալտերնանթեր, ախիրանթես, բեզոնյա, էխեվերիա, ճոճռուկ, սառնենի), որոնց օգնությամբ այնտեղ ստեղծվում են բազմապիսի նախշեր ու զարդեր: Բնակավայրերի կանաչապատման բնագավառում հաճախակի հանդիպում են ծաղկային ծաղկաթմբեր, որոնք առանձնակի շուք են հաղորդում տարբեր տիպի կանաչ տնկարկներին: Միանյա ծաղկաբույսերով ծաղկաթմբեր ձևավորելիս անհրաժեշտ է այնպեսի բույսեր ընտրել, որ, պահպանելով գունային ներդաշնակությունն ու համաչափությունը, ծաղկաթումբը գեղազարդ լինի ամբողջ վեգետացիայի ընթացքում: Բուլոր կողմերից դիտվող ծաղկաթմբերում, որպես կանոն, բարձր ծաղկատեսակները տեղադրվում են կենտրոնական մասում, իսկ դեպի դուրս՝ նվազողական կարգով տեղաբաշխվում են մյուս տեսակները: Եթե ծաղկաթումբը ունի միակողմանի դիտելիություն, ապա խոշոր ծաղկատեսակները պետք է տեղադրել ծաղկաթմբի հետին հատվածում:

Պարտեզ



Կանաչապատման մեջ պարտեզը տեղադրվում է հորիզոնական հարթություններում և բաղկացած է մի քանի մասերից՝ սիզամարգ, ծաղկային օջախ, մանր ճարտարապետական ձև: Սովորաբար պարտեզը լինում է գորգային և ծաղկային: Ներքաղաքային կանաչ տնկարկներում պարտեզը նախագծում և ձևավորում են դիտարժան վայրերում, որպեսզի վերջինիս կոմպոզիցիոն մտահղացումները տեսանելի լինեն բազմաքանակ այցելուների համար, խորհուրդ է տրվում պարտեզը հիմնադրել բարձրադիր միկրոլանդշաֆտների հարևանությամբ կամ արհեստականորեն 30-60սմ խորացնել պարտեզի հողակտորը: Որպես կանոն՝ պարտեզը լինում է ուղղանկյունաձև, որի երկարությունը 4-7 անգամ գերազանցում է նրա լայնությանը: Գորգային պարտեզում գերիշխողը սիզամարգն է, հետևաբար ծաղկային

զարդարանքները էպիգոդիկ բնույթ են կրում: Նման պարտերում որոշ սովորական բույսեր պարտիզագործը զուգակցում է մանր ճարտարապետական ձևերին և գեղագիտական յուրօրինակ հմայք հաղորդում վերջինիս: Ծաղկային պարտերում, ի տարբերություն գորգայինի, գերակշռում են ծաղկային բազմապիսի ու տարաբնույթ զարդերն ու նախշերը, իսկ սիզամարգը ուղղակի կապող օղակ է դրանց միջև: Ծաղկային պարտերում օգտագործվում են ինչպես միամյա, այնպես էլ բազմամյա ծաղկատեսակներ, որոնք սիզամարգից անջատվում են հիմնականում զարդերի զննությամբ:

Ածու



Ածուները միակողմանի կամ երկկողմանի նեղ, երկար, երբեմն կարճ ծաղկային մարգեր են, որոնք տեղաբաշխվում են փողոցների, հրապարակների, ծառուղիների, ճարտարապետական կառույցների ճակատային հատվածների և ցանկապատերի երկարությամբ: Ածուների լայնությունը տատանվում է 0,5-ից մինչև 2(2,5) մ սահմաններում, իսկ երկարությունը՝ նվազագույնը 3 անգամ ավելի: Շատ երկար ածուները միապաղաղ ու ձանձրալի են, ուստի խորհուրդ է տրվում ածուներ ունենալ ընդհատումներով: Ածուները ծաղկաթմբերի նման կարելի է զարդարել միայն միամյա կամ բազմամյա ծաղկատեսակներով, երբեմն էլ՝ ջերմատնային տերևագեղազարդ բուսատեսակներով: Միակողմանի ածուներում, որոնք տեղաբաշխվում են կառույցների, ցանկապատերի երկարությամբ, անհրաժեշտ է առաջին պլանում տեղադրել կարճ ծաղկատեսակներ, իսկ հետին մասերում՝ աճողական կարգով՝ բարձրահասակներ, որպեսզի օգտագործված բոլոր ծաղկատեսակներն էլ տեսանելի լինեն և ապահովեն ածուի գեղազարդությունը: Երկկողմանի ածուները, որոնք գերազանցապես տեղադրվում են փողոցների, ճանապարհների, մայթերի, ծառուղիների երկարությամբ, եթե նեղ են, նպատակահարմար է՝ ունենալ հորիզոնական ծաղկաշերտ, իսկ լայն ածուների պարագայում խորհուրդ է տրվում ծաղկաշերտի կենտրոնը ծաղիկների ճիշտ ընտրությամբ քիչ բարձրացնել, որպեսզի

երկու կողմից էլ լավ տեսանելի լինի: Նման ածուներն ավելի գեղազարդ են, երբ տեղադրվում են եզրագծից 1մ հեռավորության վրա՝ սիզամարգի ներսում:

Խառը ածու



Խառը ածուները տարբեր կենսաձևի ծաղիկների զուգակցությամբ ձևավորված ծաղկաշերտեր են, որոնք, շնորհիվ տեսակային և գունային խայտաբղետության, ապահովում են ծաղկային օջախի գեղազարդությունը վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Խառը ածուները սովորական ածուներից տարբերվում են ծաղկաբույսերի բազմազանությամբ և տնկման խառը եղանակով: Խառը ածուների լայնությունը լինում է 1,5 -3 մ, իսկ երկարությունը՝ 10-15 (20) մ: Խառը ածուներում շատ կարևոր է ծաղկատեսակների ճիշտ ընտրությունը և գունային ներդաշնակության ապահովումը, այլապես խայտաբղետությունը վերածվում է անկանոնության:

Առանձնյակ



Ծաղկաբուծության բնագավառում որպես առանձնյակ հանդես են գալիս խոշոր, գեղեցիկ, յուրօրինակ ծաղիկներ, տերևներ կամ պսակ ունեցող մենաբույսերը (պերճածաղիկ, արմավաշուշան, քաջվարդ, լեռնավարդ, ջղաշուշան, դրախտավարդ, վարդ) կամ մոնո ծաղկախմբերը (երիցուկ, խորդենի, գորտնուկ, շուշան, վարդակակաչ, հակինթ, մարգես, եղսպակ), որոնք չափազանց գեղազարդ են հատկապես խնամված սիզամարգերում: Կանաչապատման մեջ գեղարվեստական կոմպոզիցիաները շեշտադրելու, ուշադրության արժանացնելու նպատակով օգտագործում են առանձնյակներ, որոնք, շնորհիվ իրենց գեղեցիկ ծաղիկների ու հաբիթուսի, գրավում են այցելուների ուշադրությունը և ամբողջացնում՝ կանաչ տնկարկի կոլորիտը:

Արաբանախշ



Արաբանախշը գորգային կամ ծաղկող կարճահասակ ծաղկաբույսերով ձևավորված փոքրիկ, յուրօրինակ ուրվագծային կոմպոզիցիա է, որի օգնությամբ պարտերում, սիզամարգում, երբեմն գորգային ծաղկաթմբում համապատասխան ծաղկատեսակների օգտագործմամբ կանաչապատող դիզայները ստանում է բազմապիսի ոլորապտույտ գծային պատկերներ ու նախշեր: Սովորաբար արաբանախշերը նմանեցնում են տերևի, ծաղկի, ծաղկաշղթայի, պսակի, սլաքի, ժամացույցի, աբստրակտ գծանկարների և այլ նախշերի ու պատկերների: Ռելիեֆային հարուստ լանդշաֆտներով բնակավայրերում արաբանախշերով ձևավորում են նաև թույլ թեքությունները՝ դրանց տալով կոմպոզիցիոն ամենատարբեր լուծումներ:

Ջարդերիզ



Ջարդերիզը (ծաղկերիզ) ծաղկային ձևավորումներում հաճախակի օգտագործվող գեղարվեստական տարրերի կամ մոտեցումների արտահայտման ձև է, որի օգնությամբ տարանջատվում և ավելի ցայտուն են դառնում ծաղկային ձևավորումների առանձին կոմպոզիցիաները: Ջարդերիզով կարելի է շրջափակել ծաղկաթումբը, պարտերը, դրանց առանձին հատվածները, ընդգծել հետիոտների անցումները կանաչ տնկարկում և այլն: Ծաղկաբուծության մեջ խուզման եղանակով միատոն, միատարր զարդերիզներ ստանալու համար պիտանի են պերիլլան, մանրածաղկավոր երիցուկը, մոխրածաղիկը, սանթուխինը և այլն, իսկ ծաղկող զարդերիզներ ստանալու համար՝ վառվռուկը, անծերին, լոբելիան, կարճահասակ բոցենին, թավշածաղիկը և մի շարք այլ ծաղկատեսակներ: Միևնույն տեսակի 2 տարբեր գույնի հիբրիդներ զուգակցելով կարելի է ստանալ հյուսանման զարդերիզ, որը միանշանակ ավելի գեղեցիկ է և դիտարժան:

Լաբորատոր-գործնական պարապմունք 6

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Ծաղիկը ինքնին գեղեցկություն է, այն լրացուցիչ դրական լիցքեր է հաղորդում մարդկանց՝ բարձրացնելով նրանց տրամադրությունը: Բնության կողմից ծաղիկները օժտված են մի շարք գեղազարդ հատկանիշներով, որոնցից են՝ ծաղկունը, ծաղկի ձևն ու կառուցվածքը, գունավորումը, բուրմունքը, ծաղկման ժամկետներն ու երկարատևությունը, տերևագեղազարդությունը, մշտադալարութունը, երբեմն լիաթերթությունը: Ծաղկաբույսերի արհեստական կամ ձեռքբերովի գեղազարդ հատկանիշների շարքում կարևոր են լիաթերթությունը, վաղ ծաղկեցումը և ծաղկահարդարումը:

Բնական գեղազարդ հատկանիշներ

Ծաղկուն՝ բնության ստեղծած ֆիզիոլոգիական մի երևույթ է, երբ ծաղկաբողբոջից առաջանում է ծաղիկը՝ ծաղկավոր բույսերի բազմացման սեռական օրգանը: Բույսերի ծաղկելուն հաջորդում է փոշոտումը, բեղմնավորումը, պտղակալումը և սերմակալումը, որի հետևանքով էվոլյուցիայի ընթացքում բազմանում, կատարելագործվում և պահպանվում են ծաղկավոր բույսերի հետագա սերունդները: Արտաքին որոշակի պայմաններում, ժամանակի ու տարածության մեջ բույսերի ծաղկումը լինում է խիստ տարբեր: Կան տեսակներ, որոնց մոտ սկզբում երևում են ծաղիկները՝ որոշ պալարասոխուկավորներ, հետո՝ նոր տերևները, բույսերի մեծամասնության մոտ տեղի է ունենում ճիշտ հակառակ երևույթը: Որոշ արևադարձային բույսերի ծաղիկներն առաջանում են նաև բնի, ցողունի և բազմամյա ճյուղերի վրա: Ընդհանուր առմամբ բույսերը ծաղկում են ցերեկվա տարբեր ժամերին, սակայն հանդիպում են բույսեր, որոնք ծաղկում են գիշերվա ընթացքում (գիշերային գեղեցկուհի, հոտավետ ծխախոտ, արջընկույզ): Կանաչապատման բնագավառում այս երևույթը նպաստել է ծաղկային ժամացույցների ձևավորմանը: Բնության մեջ հանդիպում են բույսեր, որոնք իրենց կյանքի ընթացքում ծաղկում են մեկ անգամ (պերճածաղիկ), դրան հակառակ՝ որոշ պտղատու և գեղազարդ ծառաբույսեր մեկ վեգետացիայի ընթացքում ծաղկում են 2-3 անգամ: Արևադարձային մի շարք բույսեր էլ ծաղկում են ուժեղ անձրևներից կամ ամպրոպից հետո:

Ծաղկի ձև և կառուցվածք՝ ծաղիկը ձևափոխված, խիստ կարճացած ընձուղ է, այն կազմված է՝ ծաղկակոթից, ծաղկակալից, ծաղկապատից (բաժակ, պսակ), առէջներից և վարսանդից: Սովորաբար ծաղիկները լինում են միայնակ և խմբերով, վերջիններից անվանում են ծաղկաբույլ կամ ծաղկափթություն: Ծաղկի կազմում՝ շնորհիվ իրենց գունագեղության և ձևի, աչքի են ընկնում պսակաթերթիկներն ու առէջները: Ծաղիկներն ըստ ձևի լինում են կանոնավոր, երբ պսակաթերթիկներն ու առէջները՝ ձևով ու մեծությամբ միատեսակ են ու սիմետրիկ, նաև անկանոն, երբ ծաղկապատում խախտված է համաչափությունը և սիմետրիան: Ծաղիկները միմյանցից տարբերվում են նաև չափերով, բնության մեջ հանդիպում են աննշան, մանր (տոսախ, տխլենի, խուրմա) և հսկա (ռաֆլեզիա, ամորֆոֆալուս) ծաղիկներ, իսկ ծառաբույսերի մոտ՝ նաև ծաղկակիցներ (կեղծ ծաղիկներ), որոնք գրավում են միջատներին և ունեն բարձր գեղազարդություն (լորենի, բուգենվելիա):

Բուրմուկ - Բուրմուկը արձակելու հատկություն ունեն բազմաթիվ բույսեր, այն պայմանավորված է դրանց տարբեր օրգաններում առկա եթերային յուղերով և խեժերով (տերպեն, կումարին): Բույսի ֆիզիոլոգիական տարբեր վիճակներում, ինչպես նաև արտածին մի շարք գործոնների ազդակների ներգործությամբ բույսից եթերային յուղերը հօդս են ցնդում, արտանետվում մթնոլորտ՝ շրջակայքը լցնելով տարբեր բույրերով: Սովորաբար հոտերը լինում են դուրեկան (ծաղկային, մեղրային, կիտրոնային, անանուխի) և տհաճ (նեխած, ժավելային, կամֆորային), ինչպես նաև՝ սուր և թույլ, որոնք աչքի են ընկնում շրջակայքում տարածվելու ինտենսիվությամբ: Մեր կանաչ տնկարկներում օգտագործվող ծաղկաբույսերից բուրումնավետությամբ առանձնանում են վարդը, քաջվարդը, հիրիկը, մեխակը, հովտաշուշանը, շուշանը, անմոռուկը, վառվռուկը, մանուշակը, գնարբուկը, աստղածաղիկը, քրիզանթեմը և այլն, որոնք բուրումնավետությամբ հաճելի զգացումներ են առաջացնում հանգստացողների շրջապատում:

Ծաղկման ժամկետ, երկարատևություն - Ծաղկման ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է, քանի որ ծաղկային ձևավորման գեղագարությունը, անըդհատությունը պայմանավորված է ծաղկման հենց այդ երկու հատկանիշներով: Ըստ ծաղկման ժամկետների՝ բազմամյա ծաղկաբույսերը պայմանականորեն կարելի է բաժանել գարնանային, ամառային և աշնանային ծաղկողների, ինչ վերաբերվում է միամյաներին, ապա մեր կանաչ տնկարկներում դրանց գերակշռող մեծամասնությունը ծաղկում է մայիս-նոյեմբեր ժամանակահատվածում: Ծաղկային տարբեր տիպի ձևավորումներում բազմամյա ծաղկատեսակներ օգտագործելիս, հաշվի առնելով դրանց ծաղկման ժամկետները, երկարատևությունը (15-40 օր), անհրաժեշտ է այնպես տեղաբաշխել, որ հնարավորության սահմաններում ապահովվի երկարատև ծաղկում, իսկ որոշ ծաղկաբույսեր (վարդակակաչ, հակինթ, նարգես, քրքում) ծաղկումը ավարտելուց հետո փոխարինվեն միամյա ծաղկատեսակներով:

Լիաթերթություն - բնության մեջ էվոլյուցիայի ընթացքում բնակլիմայական անսպասելի, կտրուկ փոփոխությունների ժամանակ, երբեմն՝ մուտացիոն երևույթների ազդեցությամբ որոշակի ծաղկավոր բույսերի մոտ առաջանում է ծաղիկների պսակաթերթիկների ավելացում, որը կայունաճալով վերածվում է ծաղկի նոր հատկանիշի: Լիաթերթության մասին տեղեկությունները կարդալ ձեռքբերովի հատկանիշներ բաժնում:

Մշտադալարություն - մշտադալար են այն բույսերը, որոնց տերևները չեն թափվում, և ամբողջ տարին կանաչ են: Մշտադալար բուսատեսակները գերազանցապես տեղաբաշխված են արևադարձային և մերձարևադարձային բուսաշխարհագրական գոտիներում, որտեղ բնակլիմայական պայմանները միանշանակ նպաստավոր են բույսերի աճման ու զարգացման համար ամբողջ տարին: Մեր հանրապետության կիսաանապատային գոտում բույսերի մշտադալարության սահմանափակող գործոններից են ցրտահարությունը և օդի հարաբերական խոնավության պակասը, որոնք էլ էապես կրճատում են մշտադալար, հատկապես խոտային բույսերի տեսակաշարը: Կենտրոնական Հայաստանի բնակավայրերի ծաղկային ձևավորումներում մշտադալար խոտաբույսերից կանոնավոր աճում են միայն թելատու արմավաշուշանը և սանթրիխան:

Գունավորում - ծաղկաբույսերի կարևորագույն արժանիքներից է, որը արտահայտվում է ծաղկի օրգանների՝ հատկապես պսակաթերթիկների, երբեմն տերևակիցների ու

առեջների գեղազարդությամբ: Ծաղիկները օժտված են հայտնի գրեթե բոլոր գույներով ու երանգներով՝ բացառությամբ սև գույնի, չնայած հանդիպում են ծաղկատեսակներ (եռագույն մանուշակ, տուղտավարդ, ռեմոնտանտ վարդ), որոնց հիբրիդները ունեն գրեթե սև ծաղիկներ: Տարբեր ծաղկատեսակների մոտ ծաղկի գունավորումը արտահայտվում է տարբեր ձևով. մի խմբի մոտ գունավորումը միատոն է, մյուսի մոտ՝ երկտոն, մեկ այլ խմբի մոտ՝ բազմատոն (խայտաբղետ), որն էլ առաջացնում է ծաղիկների բազմազանություն: Ծաղիկների գույնը սովորաբար պայմանավորված է ներկող նյութերով կամ պիգմենտներով, դրանցից են քլորոֆիլը (կանաչ), քսանտոֆիլը (դեղին), կարոտինը (նարնջագույն), անտոցիանը (կարմիր, վարդագույն, մանուշակագույն): Ծաղկաբույսերի մեջ կան մի քանի տեսակներ (ավլաբույս, սանթուխ, պերիլիա, չխիմ, երիցուկ, ճոճուկ, թանթռնիկ, ջղաշուշան, ալտերնանթերա, քլորոֆիտում), որոնք գեղազարդ են շնորհիվ տերևների գույնի ու երանգների: Այդպիսի տեսակները օգտագործվում են որպես զարդերիզ, գորգ, երբեմն՝ նաև առանձնյակ և ավելի են ընդգծում ու արտահայտիչ դարձնում տարբեր տիպի ծաղկային ձևավորումները:

Ձեռքբերովի հատկանիշներ

Լիաթերթություն - գլխավորապես ձեռքբերովի գեղազարդ հատկանիշ է, որում մեծ ներդրում ունի մարդը, վերջինս արհեստական փոշոտման և տրամախաչման եղանակներով ծաղկաբուծության բնագավառում ստանում է բազմապիսի հիբրիդներ ու սորտեր՝ պսակաթերթիկների նոր, որակական հատկանիշներով: Լիաթերթությունը առաջանում է, երբ ծաղկի առեջները, երբեմն նաև վարսանդը ձևափոխվում և վերածվում են պսակաթերթերի ծաղկին հաղորդելով բարձր գեղազարդություն: Որպես կանոն՝ լիաթերթ ծաղիկներ ունեցող բույսերը գլխավորապես բազմացվում են վեգետատիվ ճանապարհով, քանի որ նրանց ծաղիկներում տրամախաչումը հիմնականում բացակայում է: Եթե ծաղկի պսակաթերթիկների շրջանակները շատ են, ապա ձևավորվում են լիաթերթ ծաղիկներ (քաջվարդ, ռեմոնտանտ վարդ, գեորգինա, թավշածաղիկ, զինածաղիկ ծխածաղիկ և այլն), եթե պսակաթերթիկների շրջանակը 2-3 շարքից է կազմված, ձևավորվում են կիսալիաթերթ ծաղիկներ (երիցուկ, կալիստեֆուս, գացանիա, գայլարդիա, փրփրեն, նարգիզ, ծխածաղիկ, և այլն):

Վաղ ծաղկեցում-հաճելի է, երբ տանը միշտ լինում են ծաղիկներ, տան անդամների ուրախությունը կրկնապատկվում է, երբ սիրված բույսի ծաղկելը (հակինթ, վարդակակաչ, հովտաշուշան, ֆրեզիա, հիրիկ, թրաշուշան, շուշան, ձնծաղիկ) զուգադիպում է ընտանեկան տոնական որևէ միջոցառմանը: Նման իրավիճակներում անգնահատելի է բույսի վաղ ծաղկումը (выгонка): Մարդը նպաստում է, որ բույսը ծաղկի այն ժամանակ, երբ ինքն է ցանկանում: Նշենք, որ այս պարագայում ոչինչ կախարդական չէ, ուղղակի անհրաժեշտ է ունենալ համբերատարություն և աշխատասիրություն: Որպես կանոն՝ վաղծաղկեցման համար պիտանի են վաղ ծաղկող այն տեսակներն ու սորտերը, որոնք ունեն շատ կարճ հանգստի շրջան, դրանցից են՝ սոխուկավոր, պալարավոր և կոճղարմատավոր որոշ ծաղկաբույսեր: Բարեխառն գոտում նշված բուսատեսակները գարնանը ծաղկելուց առաջ, հողում ձմռան սառը պայմաններում անցկացնում են իրենց հարաբերական հանգիստը: Եթե ցանկանում ենք, որ տվյալ բույսը ծաղկի դեկտեմբեր-հունվար

ամիսներին, ապա պետք է հունիսին ընտրել դրանց առողջ, խոշոր, հասուն ստորգետնյա օրգանները և երկու շաբաթ պահպանել $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, 70-80% խոնավության պայմաններում, այնուհետև մինչև սեպտեմբերի վերջը աստիճանաբար ջերմաստիճանը նվազեցնել՝ հասցնելով 17°C : Հոկտեմբերին անհրաժեշտ է ստորգետնյա օրգանները տնկել համապատասխան թաղարներում և 15-20 օր պահել սառնարաններում՝ $3-5^{\circ}\text{C}$ պայմաններում, որից հետո բույսերը տեղափոխել ջերմատուն: Տարբեր տեսակների մոտ, պայմանավորված նրանց կենսաբանական առանձնահատկություններով, ժամկետները կարող են փոփոխվել: Վաղ ծաղկեցնում են նաև որոշ ծաղկող թփեր՝ եղևանի, վարդ, բռնչի և այլն: Դրանց ծաղկեցման սկզբունքը նույնն է, իսկ տեխնոլոգիան՝ քիչ տարբեր:

Ծաղկահարդարում-Ծաղկահարդարումը արվեստ է, որի ժամանակ թարմ, կտրած, չորացած և թաղարային բույսերով ստեղծում են բազմապիսի ու տարաբնույթ գեղարվեստական կոմպոզիցիաներ՝ ծաղկեփունջ, ծաղկապսակ, ծաղկաշղթա, ծաղկազամբյուղ, ծաղկահյուս, ծաղկագոտի և այլն: Գեղազարդ պարտիզազործության մեջ ծաղկահարդարման համար առանձնացվում են հատուկ սրահներ, որտեղ մասնագիտացված մասնագետները բազմապիսի բույսերի, մետաղալարերի, թելերի, ժապավենների, զամբյուղների, կողովների և այլ անհրաժեշտ նյութերի օգնությամբ պատրաստում են տարբեր ոճի ծաղկային կոմպոզիցիաներ: Ծաղկահարդարման մի շարք ոճեր ունեն ճապոնական ծագում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը, դրանցից են իկեբանան, օսիբանան, մորիբանան, ռիկան, կոկեդանան, որոնք ներկայումս լայն տարածում են գտել երկրագնդի առաջավոր շատ երկրներում: Իկեբանան հասարակ, սակայն փիլիսոփայական խորհուրդ պարունակող գեղարվեստական ստեղծագործություն է, որի հիմնական բաղադրիչներն են կավե տափակ սափորը, սակավաթիվ ծաղիկները, ճյուղերը, չորացած պտուղները, առանձին տերևները, ջուրը և կենձանը: Կենձանը արճճից պատրաստված ծանր բարձիկ է, այն դրվում է սափորի հատակին՝ ջրի մեջ, որի վրա ամրացվում են բույսերը, և ստեղծվում է հիասքանչ կոմպոզիցիա: Մորիբանայի ձևավորման ժամանակ ծաղկասափորները հարդարում են դաշտային ծաղկեփնջերով՝ առաջնությունը տալով կոմպոզիցիայի ձևին և բովանդակությանը: Օսիբանայի ժամանակ կոմպոզիցիայի բաղադրիչներն են բոյսի չորացած ծաղիկները, տերևները, պտուղները, փոքրիկ, գունավոր, գեղազարդ քարերը և չորացրած թիթեռներն ու միջատները: Ռիկան գեղարվեստական մի ստեղծագործություն է, որում բույսերի հարդարման յուրահատուկ եղանակով կրկնօրինակում են խոշոր բնապատկերները և ինտերիերներում ստանում դրանց մանրակերտվածքները: Կոկեդանան թարգմանաբար նշանակում է մամռագունդ, այն ստանում են առավելապես կախված, ցանցապատ հողագնդի վրա ծաղկաբույսերի տնկմամբ, որոնք օգտագործվում են՝ հատկապես զատիկի տոներին:

Ծաղիկների ատլաս

Ստորև ուսանողների ուշադրությանն ենք ներկայացնում ՀՀ կիսաանապատային գոտու բնակավայրերի ներքաղաքային կանաչ տնկարկների ծաղկային ձևավորումներում հաճախակի օգտագործվող և հեռանկարային ծաղկաբույսերի վարքը և համառոտ նկարագիրը ըստ առանձին խմբերի ու տեսակների:

Լաբորատոր-գործնական պարապմունք 7

Միամյաներ

Ալտերնանթեր - *Alternanthera* Forsk. - *Алтернантера*



Նկարագրությունը-հավակատարազգիների ընտանիքին պատկանող խիտ ճյուղավորված, 10-25սմ բարձրության հարավամերիկյան բազմամյա խոտաբույս է:Տերևները շատ գեղազարդ են, ունեն գարնանալի նուրբ երանգներ՝ կարմրավուն, նարնջագույն, մանուշակագույն, ոսկեգույն, խայտաբղետ:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, լավ է աճում պարարտ, թեթև հողերում: Պահանջում է չափավոր ոռոգում:Տնկումը կատարվում է բույսը բույսից 6-8սմ հեռավորությամբ, որոշ դեպքերում՝ (եզրագիծ) ավելի խիտ մայիսի 2-րդ կեսին:

Բազմացումը-կատարվում է կտրոններով ծածկված գրունտի պայմաններում ձմռանը կամ գարնանը հողախառնուրդում: 20-25°C ջերմության պայմաններում կտրոնները արմատակալում են 3-5 օրում:

Կիրառությունը-գորգային ծաղկաթումբ, զարդերիզ, քարապարտեզ:

Աղավնիճ - *Verbena* L. - *Вербена*



Նկարագրությունը-աղավնիճագգիների ընտանիքին պատկանող 20-30սմ բարձրությամբ, ճյուղավորված ընձյուղներով բազմամյա, բարեխառն գոտում՝ պայմանական միամյա բույսեր է, ունեի շուրջ 200 տեսակ, որոնք տարածված են Հարավային Ամերիկայում: Մշակության մեջ լայն տարածում են գտել հիբրիդային աղավնիճի սորտերը, որոնք աչքի են ընկնում թփի տարածնությամբ (ուղղաձիգ, սողացող, կարճահասակ) և ծաղիկների բազմերանգությամբ (կարմիր, կապույտ, վարդագույն, մանուշակագույն): Մեր պայմաններում աղավնիճը ծաղկում է մայիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-լուսասեր է, ջերմասեր, լավ է աճում պարարտ հողերում: Սածիլները տնկում են ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, 30-35 հատ 1մ²-ում: Ոռոգումը կատարվում է անձրևացումով շաբաթական 2-3 անգամ, շոգ օրերին՝ ավելի հաճախակի: Քաղիանը և փխրեցումը սկզբնական շրջանում կատարվում է 10-12 օրը մեկ անգամ, հետագայում՝ անհրաժեշտության դեպքում: Սերմերը հավաքում են հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով փետրվարի վերջին կամ մարտի սկզբին ծածկած գրունտում: Սերմերը ծլում են 7-8 օրում:

Կիրառությունը-ծաղկաթումբ, ածու, խառը ածու, պարտեր, ծաղկապսակ:

Անթառամ - Helichrysum Mill. – Бессмертник



Նկարագրությունը-աստղածաղկազգի 40-80սմ բարձրության, ուղղաձիգ կամ ճյուղավորված անթառամ ծաղիկներ են: Գիտությանը հայտնի է շուրջ 500 տեսակ, որոնք տարածված են Աֆրիկայում, Ասիայում և Եվրոպայում: Կանաչապատման մեջ լայն տարածում ունի ավստրալիական ծաղկակիցավոր անթառամը, որը մշակության մեջ հանդես է գալիս որպես պայմանական միամյա: Հատկապես արժեքավոր են նշված անթառամի խոշորածաղիկ սորտերը, որոնց ծաղկի տրամագիծը հասնում է 6-7 սմ-ի, դրանք լիաթերթ են, ունեն սպիտակավուն, վարդագույն, նարնջագույն,

մանուշակագույն, բրոնզադեղնավուն երանգավորում և ծաղկում են հունիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, նախընտրում է աճել պարարտ հողում: Սածիլումը կատարվում է մայիսի առաջին տասնօրյակին 1մ^2 -ի վրա՝ 25-30 բույս: Ոռոգումը իրականացվում է մարգերով կամ անձրևացումով 3 օրը մեկ անգամ, շոգ օրերին՝ հաճախակի: Քաղիանը և փխրեցումը կատարվում է ծաղկումից 15-20 օր հետո՝ ըստ անհրաժեշտության: Սերմերը հավաքում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մարտի առաջին կեսին ծածկած գրունտում, սերմերը ծլում են 7-12 օրում:

Կիրառությունը-ծաղկաթումբ, ածու, քարապարտեզ, ծաղկեփունջ, օսիրանա, մորիբանա:

Անթառան հնդկական – *Gomphrena globosa* L. – Гомфрена шаровидная



Նկարագրությունը-հավակատարազգիների ընտանիքին պատկանող 15-30 սմ բարձրության, չոր, գնդաձև ծաղկաբույլերով բույս է: Հանդիպում է Հնդկաստանում, Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Մշակության մեջ օգտագործվում են գնդաձև անթառանի սորտերը, որոնք հիմնականում լինում են մուգ կարմրավուն և սպիտակավուն: Մեր պայմաններում հնդկական անթառանը ծաղկում է հունիսից մինչև նոյեմբեր:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, նախընտրում է աճել թեթև հարուստ հողերում: Սածիլումը կատարվում է մայիսի կեսին՝ 1մ^2 -ի վրա 35-40 սածիլ: Ոռոգումը նույնն է, ինչպես անթառանի դեպքում: Քաղիանը և փխրեցումը կատարվում է

սածիլումից շուրջ 20օր հետո: Սերմերը հավաքում են հուլիս - հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մարտի առաջին տասնօրյակին: Սերմերը ծլում են 8-12 օրում:

Կիրառությունը-Ծաղկաթունք, պարտեր, ածու, ծաղկեփունջ, օսիբանա:

Աստղածաղիկ միամյա - Callistepus chinensis(L.) Nees – Каллистефус китайская



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող 20-80սմ բարձրության, ուղղաձիգ ճյուղավորված, գեղազարդ ծաղկաբույս է:Միամյա աստղածաղիկը (չինական կալիստեֆուս) հանդիպում է Չինաստանում և Հեռավոր Արևելքում: Մշակության մեջ գոյություն ունի շուրջ 600 սորտի միամյա աստղածաղիկ, որոնք աչքի են ընկնում ծաղիկների բազմերանգությամբ՝ սկսած սպիտակից մինչև կարմիր: Միամյա աստղածաղիկներն իրարից խիստ տարբերվում են նաև ծաղիկների կազմությամբ, չափերով ու ձևով: Ծաղիկները լինում են լիաթերթ, կիսալիաթերթ և միաթերթ՝ հավաքված զամբյուղանման ծաղկաբույլերում: Միամյա աստղածաղիկը մեր պայմաններում ծաղկում է ամառվա երկրորդ կեսից մինչև առաջին ցրտահարությունները:

Մշակությունը-լավ է աճում և զարգանում ինչպես արևի տակ, այնպես էլ կիսաստվերում, նախընտրում է պարարտ կիսածանր հողեր:Սերմերը ցանում են բաց գրունտ մարտ-ապրիլ ամիսներին բավարար խոնավ հողում, իսկ մայիսին կատարում են սածիլում: Ոռոգումը կատարվում է անձրևացումով, գարնանը՝ ըստ անհրաժեշտության, իսկ հետագայում՝ շաբաթական 3-4 անգամ:Սերմերը հավաքում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը- կատարվում է սերմերով մարտի սկզբին ծածկած գրունտում և մարտի վերջին կամ ապրիլի սկզբին բաց գրունտում:Առաջին դեպքում սերմերը ծլում են 7-10 օրում, երկրորդ դեպքում՝ 10-14 օրում: Ծլելուց 12-15 օր հետո պետք է կատարել նոսրացում:

Կիրառությունը-աշնանային ծաղկային ձևավորումներ, ծաղկեփունջ,մորիբանա:

Անժերի - Ageratum L. – Долгоцветка



Նկարագրությունը-աստղածաղկազգի 10-40սմ բարձրության, միամյա և բազմամյա, ցրված կամ հավաք, երբեմն՝ կարճահասակ թփերով ծաղկաբույս է:Գիտությանը հայտնի է շուրջ 40 տեսակ անժերիներ, որոնք տարածված են արևադարձային և մերձարևադարձային Ամերիկայում: Մշակության մեջ օգտագործվում է մեքսիկական անժերին՝ իր մի քանի տասնյակ սորտերով: Մեր բնակլիմայական պայմաններում մեքսիկական անժերին մշակվում է որպես պայմանական միամյա: Ծաղիկները մանր են, հոտավետ, հավաքված զամբյուղիկներում, որոնք էլ միավորվելով առաջացնում են հովանոցանման բարդ վահան: Ծաղիկներն ըստ սորտերի ունեն սպիտակավուն, երկնագույն, վարդագույն, փիրուզագույն և կապտամանուշակագույն գունավորումներ: Ծաղկում է հունիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմության և լույսի նկատմամբ խիստ պահանջկոտ չէ, նախընտրում է աճել թեթև, պարարտ հողերում:Սածիլումը կատարվում է մայիսի առաջին կեսին՝ 1մ²-ի վրա 30 սածիլ:Եյուղավորված թուփ ստանալու համար խորհուրդ է տրվում 25-30 օր անց կատարել գագաթնային ցողունի ծերատում: Ոռոգումը իրականացվում է 2-3 օրը մեկ անգամ: Սերմերը հավաքում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մարտի սկզբին ջերմոցում կամ ջերմատանը, սերմերը ծլում են 7-10 օրում:Բազմանում է նաև ընձյուղային կտրոններով, որը նպատակահարմար չէ:

Կիրառությունը-ծաղկաթունք,ածու,խառը ածու:

Ավլաբույս - Kochia Roth. - Кохия



Նկարագրությունը - թելուկազգիների ընտանիքին պատկանող տերևագեղազարդ, միամյա խոտաբույս է:Գիտությանը հայտնի է շուրջ 40 տեսակ ավլաբույս, որոնք բնականորեն աճում են Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Ասիայում և Ավստրալիայում: Մշակության մեջ լայն տարածում ունի մազատերևավոր ավլաբույսը, որը, շնորհիվ խիտ, մազմզուկանման բաց կանաչ տերևների և հաբիթուսի, չափազանց գեղազարդ է: Ավլաբույսի ծաղիկները մանր են, ունեն սպիտակ գույն և հետաքրքրություն չեն ներկայացնում:

Մշակությունը-խոնավասեր է, լուսասեր և ջերմասեր, նախընտրում է աճել հարուստ, պարարտ հողերում:Արհեստական ճանապարհով լավ խուզվում է:Սերմերը հավաքում են հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Բազմագունը- վաղ գարնանը կատարվում է սերմերի ցանք ինչպես ծածկած, այնպես էլ բաց գրունտում, 2 դեպքում էլ պարտադիր է նոսրացումը և նախասածիլումը:

Կիրառությունը-Սոլիտեր,զարդերիզ:

Արկտոտիս - Arctotis L. - Арктотис



Նկարագրությունը-աստղածաղիկազգի, մինչև 70սմ բարձրության, միամյա, երկամյա, բազմամյա խոտաբույս կամ կիսաթփիկ է:Հայրենիքը Հարավային Աֆրիկան է, որտեղ բնության մեջ աճում է մոտ 30 տեսակ: Մշակության մեջ օգտագործվում է հիբրիդային արկտոտիսը՝ իր մի քանի սորտերով, որոնք բավականման են գերբերային:Արկտոտիսն ունի խոշոր,գեղեցիկ,սպիտակավուն,նարնջագույն, երկնագույն

և կարմրամանուշակագույն ծաղիկներ, թուփն ուղղաձիգ է, տերևները՝ արծաթավուն, պատած սպիտակ թավով:Արկտոտիսը, լինելով արևադարձային տեսակ, մեր բնակլիմայական պայմաններում օրվա երկրորդ կեսին ծաղիկները փակվում են, իսկ ամպամած կամ անձրևոտ օրերին ընդհանրապես չեն բացվում:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, լավ է աճում հարուստ, թեթև հողերում: Սածիլումը կատարվում է մայիսի 2-րդ կեսին, 1մ²-ի վրա՝ 30-35 սածիլ: Ոռոգումը կատարվում է անձրևացումով շաբաթական 2-3 անգամ, քաղիանը և փխրեցումը՝ սկզբում 10-15օր ընդմիջումով, հետո՝ ըստ անհրաժեշտության: Սերմերը հավաքում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ջերմոցում կամ ջերմատանը մարտի սկզբին, սերմերը ծլում են 9-12 օրում:

Կիրառությունը-Ծաղկաթունբ, առանձնյակ, ծաղկեփունջ:

Բեգոնիա - Begonia L.- Бегония



Նկարագրությունը-բեգոնիազգիների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս է, հայտնի է 400-450 տեսակ, որոնք տարածված են Ամերիկայի, Ասիայի ու Աֆրիկայի արևադարձային և մերձարևադարձային շրջաններում: Մեր բնակավայրերի ծաղկային ձևավորումներում որպես պայմանական միամյաներ օգտագործվում են միշտ ծաղկող և պալարավոր մի շարք բեգոնիաներ, որոնք, շնորհիվ իրենց ծաղիկների ու տերևների գեղազարդության, գարնանը զարդարում են մեր ներքաղաքային կանաչ տնկարկները:

Մշակությունը-Կիսաանապատային գոտու պայմաններում խորհուրդ է տրվում բեգոնիան օգտագործել ծաղկային ձևավորումներում գարնանը կամ աշնանը, քանի որ դրանք, լինելով խոնավասեր բույսեր շոգ և չոր օրերին տուժում են արեգակնային ուժեղ ճառագայթումից: Թփիկների տնկումը կատարվում է 10-12սմ հեռավորությամբ: Եղանակի տաքացմանը զուգընթաց ծաղկային ձևավորումներում բեգոնիայի թփերը հողագնդով տեղափոխում են ծածկած գրունտ:

Բազմացումը-կատարվում է սերմերով ջերմատանը կամ ջերմոցում, ծլումը տեղի է ունենում 12-15 օրում: Բեգոնիան բազմանում է նաև կտրոններով (արմատակալումը տեղի է ունենում 20-25 օրից) ու պալարների բաժանումով:

Կիրառությունը-Պարտեռ, ածու, գորգային ձևավորում:

Գազանիա - Gazania Caertn. - Гацания



Նկարագրությունը-աստղաձև զգազիների ընտանիքին պատկանող միամյա կամ բազմամյա ծաղկաբույս է: Գազանիայի հայրենիքը Հարավային Աֆրիկան է, որտեղ հանդիպում է մոտավորապես 30 տեսակ: Բարեխառն գոտում լայն տարածում է գտել պայմանական միամյա փայլուն գազանիան՝ 20-30սմ բարձրությամբ հիբրիդներով, որը արծաթավուն, կանաչավուն, կտրտված, փետրածև տերևների ու խոշոր՝ 4-5սմ տրամագծով վառ նարնջագույն, դեղնանարնջագույն կամ նարնջակարմրավուն ծաղիկների շնորհիվ, առանձնակի շուք է հաղորդում ծաղկային ձևավորումներին: Մեր պայմաններում գազանիան ծաղկում է հունիս - նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, լավ է աճում պարարատ թեթև հողերում: Սածիլման աշխատանքները կատարվում են մայիսի առաջին տասնօրյակին 1մ^2 -ի վրա տնկում են շուրջ 30 սածիլ: Տնկման առաջին ամիսներին ոռոգումը իրականացվում է շաբաթը երկու անգամ, շոգ ամիսներին՝ 3-4 անգամ, քաղիանը և փխրեցումը՝ վեգետացիայի սկզբում 15-20 օրը մեկ, հետագայում՝ ըստ անհրաժեշտության: Սերմերը հավաքում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մարտի սկզբին ծածկած գրունտում, սերմերը ծլում են 6-8 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունք, պարտեր, քարապարտեզ, առանձնյակ:

Գեորգենի - Dahlia Cav. – Георгина



Նկարագրությունը - աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող բազմամյա արմատապալարավոր ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է մոտ 25 տեսակի գեորգենի, որոնք աճում են Կենտրոնական Ամերիկայի լեռնային շրջաններում վայրի վիճակում: Մշակության մեջ լայն տարածում ունի կուլտուրական գեորգենին, որը բարեխառն գոտում մշակվում է որպես միամյա և ունի բազմաթիվ սորտեր, դրանց թվերն ունեն 25-40սմ բարձրություն, ճյուղավորված են և աչքի են ընկնում կիսալիաթերթ կամ լիաթերթ սպիտակավուն, նարնջագույն, կարմրավուն, դեղնավուն, 4-6սմ տրամագիծ ունեցող ծաղիկներով: Մեր պայմաններում առատ ծաղկում են հունիսի երկրորդ կեսից մինչև նոյեմբերի կեսը:

Մշակությունը-լուսասեր է, խոնավասեր, նախընտրում է աճել հարուստ, պարարտ հողերում: Սածիլումը կատարվում է ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, 1մ²-ի վրա՝ 25-30 բույս: Ոռոգումը կատարվում է շաբաթը 2-3 անգամ, փխրեցումը և քաղիանը ցանքի առաջին ամսում պարտադիր են, որից հետո՝ ըստ անհրաժեշտության: Սերմերը հավաքում են աշնանը՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-միամյա գեորգենին բազմացվում է սերմերով՝ վաղ գարնանը ծածակած գրունտում, սերմերը ծլում են 4-5 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունբ, ածու, խառը ածու, պարտեր:

Գիշերածին (զարմանածաղիկ) - Mirabilis L. - Ночная красавица



Նկարագրությունը-գիշերածինազգիների ընտանիքին պատկանող, 70-100 սմ բարձրության, ճյուղավորված, հաստացած կոնանման արմատներով, միամյա կամ բազմամյա թուփ է: Ցեղն ունի մոտ 60 տեսակ, որոնք բնության մեջ աճում են Ամերիկա մայրցամաքի տաք շրջաններում: Մշակության մեջ լայն տարածում ունի գիշերածին յալապա տեսակը, որը մեր պայմաններում մշակվում է որպես միամյա: Ծաղիկները ձագարանման են, միջին մեծության, ունեն սպիտակավուն, դեղնավուն, ծիրանագույն, կարմրավուն գունավորում, որպես կանոն՝ բացվում են երեկոյան ժամերին: Առատ ծաղկում են հունիսից մինչև կայուն ցրտերի սկսվելը:

Մշակությունը-ջերմասեր է, սածիլումը կատարվում է մայիսի 2-րդ կեսին, բույսը բույսից 12-15սմ հեռավորությամբ: Հողի և խոնավության նկատմամբ ունի միջին պահանջկոտություն: Սերմերը հավաքում են հուլիս-սեպտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մարտի սկզբին ծածկած գրունտում, սերմերը ծլում են 10-14 օրում:

Կիրառությունը-առանձնյակ, խառը ածու, ծաղկեփունջ:

Եղեսպակ - Salvia L.- Шалфей



Նկարագրությունը- շրթնածաղկազգիների ընտանիքին պատկանող կոճղարմատավոր, բազմամյա, երբեմն՝ միամյա կամ երկամյա, խոշոր, 70-120 սմ բարձրության ծաղկաբույս է: Բնության մեջ աճում է գլխավորապես արևադարձային Ամերիկայում, հանդիպում է նաև Ասիայում և Եվրոպայում: Մշակության մեջ լայն տարածում է գտել բազմամյա փայլուն եղեսպակը, որը մեր պայմաններում մշակվում է որպես միամյա և ունի բազմաթիվ սորտեր ու հիբրիդներ: Այն ունի լավ զարգացած 50-70 սմ բարձրության ցողուններ, որոնց վրա դասավորված են վառ կարմիր կամ մուգ մանուշակագույն ծաղիկները: Մեր պայմաններում ծաղկում է հունիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը- լուսասեր է, ջերմասեր, մայիս ամսին 1մ^2 -ի վրա տնկում են շուրջ 30 սածիլ: Եղեսպակը լավ է աճում պարարտ, խոնավ հողերում: Ոռոգումը կատարվում է անձրևացման եղանակով, շաբաթը 2-4անգամ, փխրեցումը և քաղիանը՝ ըստ անհրաժեշտության: Ստվերոտ հողակտորներում ծաղկումը նկատելիորեն նվազում է: Սերմերը հավաքում են օգոստոս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմագույնը- իրականացվում է սերմերով մարտի սկզբին ծածկած գրունտում, սերմերը ծլում են 10-15 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունք, առանձնյակ, ածու, պարտեր, խառը ածու:

Զինածաղիկ – Zinnia L. - Циния



Նկարագրությունը-Աստղածաղկազգի, մինչև 100սմ բարձրության բազմամյա կամ միամյա ծաղկաբույս է:Զինածաղիկի հայրենիքը արևադարձային Ամերիկան և Աֆրիկան են:Ծաղկաբուծության մեջ մշակվում, բազմացվում են միամյա զինածաղիկի լեզվակավոր և նրբագեղ տեսակների սորտերն ու հիբրիդները, որոնք շնորհիվ ծաղիկների բազմերանգության,լիաթերթության բավականին գեղազարդ են և հաջողությամբ օգտագործվում են ներքաղաքային կանաչ տնկարկներում: Ծաղկում են մայիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-խորհուրդ է տրվում սերմերը ցանել մշակված բաց գրունտում ապրիլի 2-րդ կեսին շաղացան եղանակով, խիտ ցանքի դեպքում անհրաժեշտ է կատարել նոսրացում:Ծածկած գրունտում ցանքը կատարվում է մարտի սկզբին, սածիլումը կատարվում է ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին:Սերմերը հավաքում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմագույնը-կատարվում է սերմերով,դրանք ծածկած գրունտում ծլում են 4-7 , իսկ բաց գրունտում՝ 8-12 օրերում:

Կիրառությունը-ծաղկաթունք, ածու, խառը ածու, ծաղկեփունջ, մորիբանա:

Էխեվերիա - Echeveria DC.- Ехеверия



Նկարագրությունը - թանձրատերևազգիների ընտանիքին պատկանող վարդակավոր, հյութալի տերևներով բազմամյա սուկուլենտ է:մեր պայմաններում օգտագործվում է որպես պայմանական միամյա:Հայրենիքը Մեքսիկան է: Էխեվերիան՝շնորհիվ վարդակի ձևի ու տերևների գունազեղության (արծաթավուն,թխակապույտ, կարմրավուն,խայտաբղետ),կիրառվում է տարբեր տիպի ծաղկային ձևավորումներում:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, նախընտրում է աճել թեթև հողերում:Ձմռան ամիսներին բույսը պահպանվում է ծածկած գրունտում: Թփերը տեղափոխվում են բաց գրունտ մայիսի 2-րդ կեսին, իսկ սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի կեսին վերադարձնում են ծածկած գրունտ:Էխեվերիայի թփերը տնկում են մեկը մյուսից 8-10սմ հեռավորության վրա:Ոռոգման աշխատանքները կատարում են շաբաթը 2-3 անգամ,իսկ փխրեցումը՝ ըստ անհրաժեշտության:

Բազմազունը-կատարվում է սերներով, վարդակի կիսումով և տերևներով:

Կիրառությունը-գորգային ծաղկաթումբ, քարապարտեզ, զարդերիզ, արաբանախշ:

Թավշենի - CelosiaL.- Целозия



Նկարագրությունը-հավակատարազգիների ընտանիքին պատկանող միամյա կամ բազմամյա 25-60սմ բարձրության շուրջ 50 տեսակի ծաղկաբույսեր են, որոնք վայրի վիճակում աճում են Չինաստանում, Հնդկաստանում և ճապոնիայում: Գեղազարդ

պարտիզագործության մեջ օգտագործվում են աքլորակատարած, բրգած, փետրանման և կարճահասակ թավշենիների սորտերն ու հիբրիդները: Ծաղիկները մանր են, հավաքված փետրածև կամ կատարանման ծաղկաբույլերում, ունեն կարմրավուն, ոսկեդեղնավուն, նարնջագույն գունավորումներ: Մեր պայմաններում թավշենին ծաղկում է հունիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, լավ է աճում պարարտ, թեթև հողերում՝ նախընտրելով առատ և հաճախակի ոռոգում: Սածիլումը կատարվում է ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին՝ 1մ²-ի վրա 25-30 սածիլ: Սերմերը ծլում են 6-8 օրում ջերմոցում կամ ջերմատանը և 15-20 օրում՝ բաց գրունտում: Սերմերը հավաքում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Բազմագունը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում փետրվարի վերջին, երբեմն՝ բաց գրունտում ապրիլի սկզբին:

Կիրառությունը-Ծաղկաթումբ, պարտեր, ածու, խառը ածու, առանձնյակ, մորիբանա, ծաղկեփունջ:

Թավշածաղիկ - Tagetes L. – Бархатцы



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող միամյա կամ բազմամյա, տարբեր բարձրության (20-100սմ) ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է շուրջ 30 տեսակ թավշածաղիկ, որոնք բնության մեջ հանդիպում են մերձարևադարձային Ամերիկայում: Մշակության մեջ լայնորեն կիրառվում են միամյա թավշածաղիկ ուղղածիգ, ցածրածաղիկ և նրբատերև տեսակները՝ իրենց սորտերի բազմազանությամբ: Ծաղիկները կիսալիաթերթ են կամ լիաթերթ, ունեն տարբեր ձև ու մեծություն, յուրահատուկ հոտ, աչքի են ընկնում բազմերանգությամբ. սպիտակավուն են, թույլ դեղնավուն, ոսկեդեղնավուն, նարնջագույն, շագանակագույն, գորշ կարմրավուն, խայտաբղետ: Մեր պայմաններում ծաղկում է հունիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, վատ չի աճում նաև կիսաստվերում, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ է, դիմակայում է չորությանը: Սածիլների տնկումը կատարվում է ապրիլի 3-րդ տասնօրյակին: Ըստ առանձին տեսակների ու սորտերի՝ 1մ²-ի վրա կարելի է տնկել 20-35 սածիլ: Որոշ սորտերի վրա դրական ազդեցություն թողնում խուզումը: Ոռոգման աշխատանքները իրականացվում են շաբաթ 3 անգամ: Սերմերը կարելի է հավաքել հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմագունը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում մարտի սկզբին բաց գրունտում՝ ուշ աշնանը կամ գարնանը: Սերմերը ծածկած գրունտում ծլում են 6-8, իսկ բաց գրունտում՝ 15-20 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունք, ածու, խառը ածու, ծաղկերիզ:

Լոբելիա - Lobelia L. - Лобелия



Նկարագրությունը-զանգակազգիների ընտանիքին պատկանող, 8-30սմ բարձրության, մանր ծաղիկներով, պայմանական միամյա է, հայրենիքը՝ Հարավային Աֆրիկան:Ծաղկաթուծության մեջ հաճախակի օգտագործվում է լոբելիայի էրինուս տեսակը,որը աչքի է ընկնում ծաղկման առատությամբ և գունագեղությամբ՝ լինում է կապտավուն, մանուշակագույն, սպիտակավուն, կարմրավուն:Ծաղկում է հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-լավ է աճում արևոտ, տաք, լուսավոր, փուխր, միջին բերրիության հողերում:Պահանջում է առատ և հաճախակի ոռոգում:Բաց գրունտում սածիլումը կատարվում է մայիսի կեսին 10սմ միջբուսային հեռավորությամբ:Որպեսզի ծաղկումը առատ լինի և երկարատև,խորհուրդ է տրվում հասունացած պտուղները հեռացնել, իսկ ամռան շոգ ամիսներին հողի մակերեսից 3սմ բարձրության վրա բույսերը կտրել (խուզել), որպեսզի 15-20 օր հետո նորից առատ ծաղկեն:Ընտրովի սերմերը հավաքում են վեգետացիայի ընթացքում:

Կիրառությունը-գարդերիզ, գորգային ծաղկաթունք, պարտեր, արաբանախշ, ամպելային ձևավորում:

Երեն - Pelargonium L Her. - Пеларгония



Նկարագրությունը-խորդենագգիների ընտանիքին պատկանող, գլխավորապես մշտադալար, 50-150սմ բարձրության թփեր,թփիկներ կան պալարավոր բազմամյա բույսեր են: Գիտությանը հայտնի է երեմի մոտ 280 տեսակ,որոնց զգալի մասը բնականորեն աճում է հարավային Աֆրիկայում: Երեմը աչքի է ընկնում տերևների ու ծաղիկների բազմերանգությամբ և խայտաբղետությամբ, ծաղիկները միաթերթ են կամ լիաթերթ,ծաղկում են բավական երկար, որոշակի ընդհատումներով:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, լավ է աճում պարարտ հողերում: Ձևավորված, կոկոնակալած թփերը մեր պայմաններում խորհուրդ է տրվում տնկել բաց գրունտում, մայիսի 2-րդ կեսին՝ իրարից 25-30սմ հեռավորության վրա:Երեմի թփերը ոռոգում են շաբաթը 2 անգամ, խիստ շոգերին՝ 3 անգամ: Խորհուրդ է տրվում հոկտեմբերի վերջին խորդենու թփերը տեղափոխել ծածկած գրունտ:

Բազմացումը-կատարվում է հողում նոյեմբերին կամ փետրվարին ցողունային կտրոններով:

Կիրառությունը-ծաղկաթունբ, պարտեր, առանձնյակ, ամպելային ձևավորում, ինտերիերային կոմպոզիցիաներ:

Ծխածաղիկ - Petunia juss. - Петуния



Նկարագրությունը-մորմագգիների ընտանիքին պատկանող ուղղաձիգ կամ փռվող, խիտ ճյուղավորված,25-80սմ բարձրության բազմամյա ծաղկաբույս է:Հայրենիքը Հարավային Ամերիկան է՝ Բրազիլիան և Արգենտինան, որտեղ վայրի վիճակում հանդիպում է մոտ 20 տեսակ:Մշակության մեջ լայն տարածում է գտել հիբրիդային ծխածաղիկը իր բազմաթիվ այլատեսակներով ու սորտերով, որոնք հանդես են գալիս որպես պայմանական միամյաներ:Ծաղիկները միջին մեծության են՝4-6սմ, միաթերթ կամ լիաթերթ, միագույն կամ բազմագույն, գծավոր, հաճախ խայտաբղետ, ունեն սպիտակավուն, վարդագույն, բաց կամ մուգ կարմրավուն, մուգ մանուշակագույն, հազվադեպ՝ դեղնավուն գունավորումներ:Մեր պայմաններում առատ ծաղկում է մայիս-նոյեմբեր ամիսներին, ունի թույլ բուրմունք:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, գազադիմացկուն, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ:Սածիլումը կատարվում է ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին՝ 20-25սմ հեռավորությամբ:Խոնավության նկատմամբ միջին պահանջկոտություն ունի, խորհուրդ է տրվում ոռոգումը կազմակերպել շաբաթը 3 անգամ:Սերմերը հավաքում են պարբերաբար ողջ վեգետացիայի ընթացքում:

Բազմացումը-կատարվում է սերմերով ջերմոցում կամ ջերմատանը փետրվարի վերջին կամ մարտի սկզբին: Սերմերը ծլում են 7-12 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունբ, ածու, պարտեր, առանձնյակ, ամպելային ձևավորում:

Կաննա - Canna L.- Канна



Նկարագրությունը-կանազգիների ընտանիքին պատկանող կոճղարմատավոր, փարթամ, խոշոր տերևներով, ուղղաձիգ, մինչև 3մ բարձրության, բազմամյա ծաղկաբույս է:Հայրենիքը Հնդկաստանն է, հանդիպում է նաև Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի խոնավ, մերձարևադարձային գոտիներում:Մշակության մեջ որպես պայմանական միամյա լայն տարածում ունեն հնդկական կաննայի հիբրիդային սորտերը, որոնք շնորհիվ խոշոր, վառ կամ մուգ կարմրավուն, նարնջագույն, դեղնավուն, երբեմն պուտավոր ծաղիկների ու բոսորագույն տերևների՝ առանձնակի շուք են հաղորդում կանաչ տնկարկներին: Մեր պայմաններում կաննան ծաղկում է հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, գազադիմացկուն, նախընտրում է աճել պարարտ, թեթև հողերում:Տերևակալած թփերը տնկում են բաց գրունտում մայիսին մեկը մյուսից 30-40 սմ հեռավորության վրա:Արագ է աճում առատ ոռոգելու դեպքում:Կայուն ցրտերից առաջ (նոյեմբեր) բույսի վերգետնյա օրգանները կտրում և հեռացնում են, իսկ կոճղարմատները տեղափոխում հատուկ նկուղներ՝ պահպանելու համար:

Բազմացումը-կատարվում է ծածկած գրունտում կոճղարմատների կիսման եղանակով 20-25°C ջերմաստիճանի պայմաններում:Կոճղարմատները կիսելիս յուրաքանչյուր մաս պետք է ունենա 3-4 վերականգնող բողբոջ:

Կիրառությունը-ծաղկաթունք, առանձնյակ, ածու, պարտեր:

Հարդածաղիկ – Achyranthes L. - Ахирантес



Նկարագրությունը-հավակատարազգիների ընտանիքին պատկանող բազմամյա, 40-50սմ բարձրության խոտաբույս է, մեր պայմաններում օգտագործվում է գորգային ձևավորումներում՝ որպես պայամանական միամյա: Հայրենիքը Հարավային Ամերիկան է: Ցողունը և տերևները կարմրավուն են, որոշ այլատեսակների մոտ տերևները կանաչավուն են և ունեն ոսկեգույն ջղեր:

Մշակությունը-ջերմասեր է, լավ է աճում փափուկ, պարարտ հողերում: Խորհուրդ է տրվում օգտագործել կիսաստվերոտ գորգային ձևավորումներում, քանի որ արևի ուժեղ ճառագայթումից կարմիր տերևները գունաթափվում են: Խորհուրդ է տրվում ոռոգել շաբաթը 2 անգամ: Արհեստական խուզումը բույսի ցանկացած բարձրության վրա ապահովում է ծաղկանոցի գեղազարդությունը: Թփերը տնկում են միմյանցից 10-14սմ հեռավորության վրա:

Բազմացումը-կատարվում է ջերմատանը ձմեռող մայրակներից վերցրած, կամ ամռանը՝ բաց գրունտում մշակվող բույսերից վերցրած կտրոններով: Կտրոնների արմատակալումը տեղի է ունենում 7-10 օրում մաքուր, լվացված ավազի մեջ:

Կիրառությունը-գորգային ծաղկաթունք, քարապարտեզ, զարդերիզ:

Հինաժաղիկ - Impatiens L. – Бальзамин



Նկարագրությունը-զգայնուկազգիների ընտանիքին պատկանող հյութալի, գորշ կանաչավուն, փայլուն ցողուններով, 50-70 սմ բարձրության միամյա և բազմամյա ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է շուրջ 190 տեսակ, որոնք հանդիպում են Ասիայում, Աֆրիկայում, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Մշակության մեջ լայն տարածում ունեն միամյա հինաժաղիկ բազմաթիվ սորտեր, որոնք լիաթերթ են, կարմիր, սպիտակ, վարդագույն և մանուշակագույն: Մեր պայմաններում ծաղկում է հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, լավ է աճում է պարարտ, փուխր հողերում: Սածիլումը կատարվում է մայիսի առաջին կեսին, իսկ ապրիլի կեսին կարելի է կատարել ցանք նաև բաց գրունտում: Որպեսզի ծաղկումը լինի առատ, խորհուրդ է տրվում բույսի աճելուն զուգընթաց հեռացնել կողքային ցողունները: Ոռոգումը կատարվում է շաբաթը 3-4 անգամ: Սերմերը հավաքում են հուլիս-սեպտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում մարտի սկզբին: Դրանք ծլում են 8-12 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունք, ածու, խառը ածու:

Հնդկոտեն - *Tropaeolum L.* - Настурция



Նկարագրությունը-հնդկոտենազգիների ընտանիքին պատկանող թափվող, խիտ ճյուղավորվող կամ փաթաթվող, 25սմ-ից մինչև 4մ բարձրության ծաղկաբույս է։ Գիտությանը հայտնի է մոտ 50 տեսակ, որոնք հանդիպում են Հարավային Ամերիկայում և Կենտրոնական Եվրոպայում։ Մշակության մեջ օգտագործվում է միամյա կուլտուրական հնդկոտենը, այն ունի հիբրիդային մի շարք սորտեր, որոնք աչքի են ընկնում փարթամ, գեղեցիկ, կոթունավոր տերևներով, առատ ծաղկում են, ունեն միջին մեծություն, հասարակ կամ լիաթերթ են, բազմագույն՝ դեղին, նարնջագույն, վարդագույն և բուրումնավետ։ Մեր պայմաններում ծաղկում է հունիս-հոկտեմբեր ամիսներին։

Մշակությունը-ջերմասեր է, լավ է աճում պարարտացված, փուխր հողերում, անհրաժեշտ է հաճախակի ոռոգել՝ շաբաթը 4-5 անգամ։ Տունկը կատարում են թաղարներում աճեցրած թփիկներով՝ ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին բույսը բույսից 20-30սմ հեռավորության վրա։ Նույն ժամանակահատվածում կարելի է կատարել նաև սերմերի ցանք նախօրոք մշակված հողակտորում։ Սերմերը հավաքում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին։

Բազմագույնը-կատարվում է սերմերով՝ մարտի սկզբին, սերմերը ծլում են 8-12 օրում։ Բաց գրունտում։ Վեգետատիվ բազմացմա

Կիրառությունը-ծաղկաթունք, ածու, պարտեր, ամպելային ձևավորում։

Միմուսիկ - *Mimulus L.* - Губастик



Նկարագրությունը-խլածաղկազգիների ընտանիքին պատկանող, 15-20սմ բարձրության, դեղնավուն կամ նարնջակարմրավուն ծաղիկներով գեղազարդ միամյա ծաղկաբույս է: Հայրենիքը Ամերիկա մայրցամաքն է: Ծաղկաբուծության մեջ օգտագործվում են միմոսիկի հիբրիդային սորտերը, որոնք այդ ցեղի տարբեր տեսակների տրամախաչման արդյունք են: Մեր պայմաններում միմոսիկը ծաղկում է մայիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, աճում է նաև կիսաստվերում: Պահանջկոտ է հողի և նրա խոնավության նկատմամբ: Մեր պայմաններում սածիլները տնկվում են բաց գրունտում մայիսի 2-րդ կեսին: Ոռոգման աշխատանքները իրականացնում են շաբաթը 3-4 անգամ: Ամռան շոգերին խորհուրդ է տրվում բույսերը խուզել հողի մակերեսից 4-6սմ բարձրության վրա, որպեսզի 2-րդ անգամ ծաղկեն: Սերմերը հավաքում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում մարտի առաջին տասնօրյակին, դրանք ծլում են 7-10 օրում:

Կիրառությունը-ծաղկաթումբ, պարտեր, ածու, առանձնյակ:

Սոխրածաղիկ - *Cineraria L.* - Пепельник



Նկարագրությունը - աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, երկամյա կամ բազմամյա, 30-60սմ բարձրության ծաղկաբույս է: Հայրենիքը միջերկրական ծովի ավազանի երկրներն են: Տերևները փետրանման են, կտրտված, արծաթավուն, թավոտ և բավական գեղազարդ: Ծաղիկները մանր են, անշուք, հավաքված գնդիկանման ծաղկաբույլերում: Դրանք հիմնականում դեղնավուն են, երբեմն՝ կապտավուն կամ վարդակարմրավուն, ծաղկում են ծածկած գրունտում՝ փետրվարին, իսկ բաց գրունտում՝ մայիսին 45-60 օր տևողությամբ: Մեր կլիմայական պայմաններում միամյա է և օգտագործվում է, որպես տերևագեղազարդ ծաղկատեսակ:

Մշակությունը - ջերմասեր է, չափավոր խոնավասեր, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ, սակայն թեթև, սննդանյութերով հարուստ հողերում ավելի լավ է աճում: Սածիլներ ստանում են ծածկած գրունտի պայմաններում՝ մասնավորապես սառը ջերմոցներում սերմերի ցանքից: Խորհուրդ է տրվում սերմերի ծլումից 20-25 օր անց սառը ջերմոցում կատարել նոսրացում 3×3 սխեմայով: Առողջ, որակյալ սածիլներ ունենալուն շատ է օգնում ցողումը: Մեր պայմաններում հիմնականում մշակվում է

որպես թաղարային կուլտուրա, չնայած որպես տերևագեղազարդ ծաղկատեսակ անփոխարինելի է մի շարք ծաղկային ձևավորումների համար:

Բազմագունը-կատարվում է սերմերով փետրվար-մարտ ամիսներին ծածկած գրունտում, սերմերը ծլում են 7-10 օրում: Բազմանում է մաս կանաչ կտրոններով ամռանը:

Կիրառությունը-թաղարային կուլտուրա, գորգային ծաղկաթումբ, զարդաերիզ, ինտերիերային ձևավորում:

Նարգիզ - *Calendula L.* - *Нарцис*



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, խիստ ճյուղավորված, 25-50 սմ բարձրության, միամյա ծաղկաբույս է: Հայրենիքը Հարավային Եվրոպան է, որտեղ բնության մեջ աճում է շուրջ 15 տեսակ: Մշակության մեջ լայն տարածում են գտել բուժիչ նարգիզի մի քանի սորտեր, նրանց ծաղիկները լիաթերթ են, ունեն դեղնավուն կամ նարնջավուն գունավորում: Նարգիզը ծաղկում է մայիս-նոյեմբեր ամիսներին որոշակի ընդհատումներով: Մեղմ կլիմայի դեպքում բույսերը չեն ցրտահարվում և սկսում են ծաղկել վաղ գարնանից:

Մշակությունը-շատ լավ է աճում արևոտ հողակտորներում, հողի և խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ է, մաս գազադիմացկուն: Մեր բնակլիմայական պայմաններում սերմերի ցանքը կարելի է կատարել բաց գրունտում թե՛ ուշ աշնանը, թե՛ գարնանը, երկու դեպքում էլ ծաղկումը տեղի է ունենում վաղ գարնանը: Ոռոգումը կատարվում է շաբաթը 2-3 անգամ: Ամռան ամիսներին, ծաղկման նվազմանը զուգընթաց, խորհուրդ է տրվում բույսերը համատարած խուզել հողի մակերևույթից 2-3սմ բարձրությամբ, որ դրանք նորից առատ ծաղկեն: Սերմերը հավաքում են հունիս-նոյեմբեր ամիսներին:

Բազմագունը-կատարվում է սերմերով ինչպես բաց, այնպես էլ ծածկած գրունտում, սերմերը ծլում են 6-10 օրում, երկրորդ դեպքում հնարավոր է ծլման ժամկետների ձգձգում:

Կիրառությունը-ծաղկաթումբ, ածու, խառը ածու, քարապարտեզ, գարնանային պարտեզ:

Նունուֆար - Ipomea Lam. – Вьюнок



Նկարագրությունը-պատատուկազգիների ընտանիքին պատկանող ուղղաձիգ կամ մագլցող ցողուններով միամյա կամ բազմամյա խոտաբույս է, երբեմն՝ թուփ ու կիսաթուփ: Գեղազարդ պարտիզագործության մեջ անփոխարինելի են նունուֆարի մագլցող, մասնավորապես սովորական, խոշորածաղիկ և եռագույն սորտերը, որոնց ծաղիկները խոշոր են, ձագարանման և ունեն սպիտակավուն, վարդագույն, երկնագույն, դեղնավուն ու մանուշակագույն երանգներ: Ծաղկում է հունիս հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-լուսասեր է, նախընտրում է պարարտ, փուխր հողեր, խոնավության նկատմամբ պահանջկոտ է: Խորհուրդ է տրվում ցանքը կատարել բաց գրունտում 15-18սմ հեռավորությամբ փոքրիկ փոսերում՝ յուրանքանչյուրում դնելով 3-4 սերմ: Առատ ոռոգելու դեպքում բույսի գեղազարդությունը բարձրանում է: Սերմերը հավաքում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով բաց գրունտում, սերմերը ծլում են 5-8 օրում:

Կիրառությունը-ուղղաձիգ կանաչապատման առանձին կոմպոզիցիաներ:

Շահպրակ - Matthiola R.Br. - Левкой



Նկարագրությունը-խաչածաղկավորների ընտանիքին պատկանող, 15-60սմ բարձրության, միամյա կամ պայմանական միամյա գեղազարդ ծաղկաբույս է,


հայրենիքը՝ Յարավային Եվրոպան: Շահարակն ունի բուրավետ, բազմերանգ՝ սպիտակ, կարմիր, կապույտ, մանուշակագույն պարզ կամ լիաթերթ ծաղիկներ: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին, որոշ սորտեր աշնանը՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, հողի և խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ: Ոռոգում են շաբաթը 2-3 անգամ: Ծաղկման երկարատևությունը ապահովելու համար խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում կատարել կրկնակի սածիլում, իսկ ծաղկային ձևավորումներում լրացումներ իրականացնել իս ունենալ թաղարային բույսեր: Սերմերը հավաքում են հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մարտի սկզբին ծածկած գրունտում, սերմերը ծլում են 4-6 օրում:

Կիրառությունը-ածու, խառը ածու, ծաղկաթումբ, ծաղկեփունջ:

Շանբերան - *Antirrhinum L.* - **Львиный зев**



Նկարագրությունը-խլածաղկազգիների ընտանիքին պատկանող ուղղածիգ ցողունով, ճյուղավորված, բրգանման, 20-80սմ բարձրության, բազմամյա ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է շուրջ 40 տեսակ, որոնք բնության մեջ աճում են միջերկրածովյան երկրներում, մերձարևադարձային Ասիայում և Ամերիկայում: Ծաղկաբուծության մեջ, որպես պայմանական միամյա, լայն տարածում է գտել խոշորածաղիկ շանբերանը՝ իր բազմաթիվ սորտերով, որոնք, ըստ բարձրության, բաժանվում են 3 խմբի՝ բարձրահասակ (60-80սմ), միջահասակ (30-50սմ) ցածրահասակ (20-25սմ): Ծաղիկներն անկանոն են, նստած կարճ կոթունների վրա, նման երախի, որտեղից էլ առաջացել է նրա անվանումը: Ծաղիկներն ունեն սպիտակ, վարդագույն, կարմիր, դեղին, նարնջագույն, բոսորագույն գունավորում: Ծաղկում է հունիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, կանոնավոր աճում է լուսավոր, նաև կիսաստվերոտ հողակտորներում, գազադիմացկուն է, հողի և խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ, ոռոգումը կատարվում է շաբաթը 2-3 անգամ: Սածիլում են ապրիլի վերջին, միջբուսային հեռավորությունը կախված է թփի մեծությունից և կազմում է 15-35սմ: Սերմերը տարիներին՝ ձմռանը, չի ցրտահարվում և վաղ գարնանը սկսում է ծաղկել: Սերմերը հավաքում են հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով, երբեմն՝ կանաչ կտրոններով:

Կիրառությունը-ծաղկաթումբ, ածու, խառը ածու, առանձնյակ:

Պերիլա - Perilla L. - Перилла



Նկարագրությունը-շրթնածաղկազգի 40-80սմ բարձրության տերևագեղազարդ միամյա բույս է:Հայրենիքը Չինաստանն է:Պերիլայի տերևները փայլուն են, բոսորագույն կամ մուգ սևին տվող, ունեն արտահայտված ծոպերիզներ:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր լավ է աճում նաև կիսաստվերում, սակայն տեղի է ունենում գունափոխություն:Խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ է, նախընտրում է աճել պարարտ, թեթև հողերում:Սածիլումը բաց գրունտում իրականացնում են ապրիլի վերջին կամ մայիսի առաջին կեսին բույսը բույսից 25-30սմ հեռավորության վրա,իսկ զարդերիզներում`14-18սմ:Սերմերը հավաքում են մայրացու բույսերի ծաղկելուց հետո` 20-25օր ընդմիջումներով:Շատ դրական ազդեցություն է թողնում արհեստական խուզը:Առաջին խուզը կատարվում է բույսի 10-12սմ բարձրության ժամանակ:

Բազմազունը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում մարտ-ապրիլ ամիսներին,իսկ բաց գրունտում` հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:Սերմերը ծլում են 10-12 օրում:

Կիրառությունը-Զարդերիզ, գորգային ծաղկաթունք:

Պիրետրում - Pyrethrum Gaertn. – Пиретрум



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, 20-30սմ բարձրության, տերևագեղազարդ պայմանական միամյա է,հայրենիքը Եվրոպան է:

Առավել արժեքավոր է հոտավետ երիցուկը,որի տերևները գեղազարդ են, փետրաբլթակավոր և ունեն ոսկեդեղին գույն,ծաղիկները մանր են սպիտակ,անշուք:

Մշակությունը- լուսասեր է, խոնավասեր, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ: Սածիլումը բաց գրունտում մեր պայմաններում իրականացվում է մայիսի սկզբից 8-10սմ միջբուսային հեռավորությամբ:Շատ լավ է տանում արհեստական խուզը: Սերմերը հավաքում են ծաղկման ավարտից հետո մայրացու բույսերից:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում՝ հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին: Սերմերը ծլում են 8-10 օրում:

Կիրառությունը-զարդերիզ, գորգային ծաղկաթումբ:

Վառվռուկ - Alyssum L. – Бурачок



Նկարագրությունը-խաչածաղկազգիների ընտանիքին պատկանող, խիստ ճյուղավոր-վող, թափվող կամ փռվող նուրբ ցողուններով, երբեմն բարձիկանման, 15-50սմ բարձրության, միամյա կամ բազմամյա խոտաբույս է:Գիտությանը հայտնի է վառվռուկի շուրջ 100 տեսակ, որոնք բնության մեջ աճում են Կենտրոնական Եվրոպայում, Կովկասում, Հայաստանում: Ծաղկաբուծության մեջ լայն տարածում են գտել միամյա մերձծովյան վառվռուկի մի շարք սորտեր, որոնք 15-25սմ բարձրության,խիտ թփակալած բույսեր են:Վառվռուկը աչքի է ընկնում սպիտակավուն, վարդագույն, մանուշակագույն գունավորում ունեցող մանր ծաղիկներով,որոնք հավաքված են վահանաձև կամ ողկույզանման ծաղկաբույլերում: Վառվռուկի ծաղիկներն արձակում են մեղրի բուրմունք: Մեր պայմաններում ծաղկում է հունիսից մինչև ուշ աշուն:

Մշակությունը-լուսասեր է,պահանջկոտ հողի և խոնավության նկատմամբ: Սածիլումը բաց գրունտում կատարվում է մայիսին 10-15սմ հեռավորության վրա:Առատորեն ծաղկելու համար խորհուրդ է տրվում սածիլները համատարած խուզել 4-5սմ բարձրության վրա սածիլումից 15-20 օր հետո:Ոռոգման աշխատանքները կատարվում են շաբաթը 3-4 անգամ:Սերմերը պարբերաբար հավաքում են վեգետացիայի ընթացքում:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում մարտի սկզբին, սերմերը ծլում են 6-8 օրում,դրանք կարելի է ցանել նաև բաց գրունտի մշակված հողակտորներում աշնանը (նոյեմբեր) կամ գարնանը (մարտ-ապրիլ):

Կիրառությունը-ծաղկաթումբ, ծաղկերիզ, ածու, պարտեր, ալպիական այգի, քարապարտեզ:

Փրփրեն - Portulaca Hook. – Портулак



Նկարագրությունը-դանդուռազգիների ընտանիքին պատկանող, գետնատարած, 15-20սմ բարձրության, բազմամյա ծաղկաբույս է:Գիտության մեջ հայտնի է մոտ 100 տեսակ, որոնք աճում են Հարավային Ամերիկայում:Ծաղկաբուծության մեջ, որպես պայմանական միանյա, լայնորեն օգտագործվում է խոշորածաղիկ փրփրենը, որն ունի բազմաթիվ գեղազարդ սորտեր:Ցողուններն ու տերևները մսալի են, հյութալի, ունեն կանաչանոխրավուն գունավորում:Ծաղիկները պարզ են կամ լիաթերթ, տարբեր գույների՝ կարմիր, դեղին, սպիտակ, վարդագույն, նարնջագույն, մանուշակագույն՝ 3-4 սմ տրամագծով: Ծաղկում է հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, չորադիմացկուն, լավ է աճում թեթև, ավազոտ, պարարտ չափավոր խոնավ հողերում:Ոռոգում են շաբաթը 2-3 անգամ:Սածիլում են մայիսի 2-րդ կեսին 10-12սմ միջբուսային հեռավորությամբ:Սերմեր հավաքում են պարբերաբար ամռան ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում փետրվարին,իսկ բաց գրունտում՝ աշնանը կամ գարնանը, առաջին դեպքում սերմերը ծլում են 6-10, երկրորդ դեպքում՝ 10-14 օրում:

Կիրառությունը-գորգային ծաղկաթումբ, պարտեր, քարապարտեզ, ածու:

Խլորոֆիտում - Chlorophytum Ker-Garwl. - Хлорофитум



Նկարագրությունը-Շուշանազգիների ընտանիքին պատկանող, հաստացած, պալարաարմատավոր 30-60սմ բարձրության բազմամյա տերևագեղազարդ խոտաբույս է:Գիտությանը հայտնի 215 տեսակները վայրի վիճակում հանդիպում են

Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի և Ավստրալիայի արևադարձային շրջաններում: Ծաղկաբուծության մեջ լայնորեն օգտագործվում են Կապսի և փուփուլավոր խլորոֆիտումները, որոնք ունեն բաց կանաչավուն, կենտրոնում՝ երկար շերտով սպիտակադեղնավուն, ադեղնաման տերևներ: Խլորոֆիտումի ծաղիկները մանր են, սպիտակավուն և անշուք:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, հողի և խոնավության նկատմամբ՝ պահանջկոտ: Մայիսի 2-րդ կեսին ջերմատներից տեղափոխված խլորոֆիտումի ձևավորված թփերը տնկում են բաց գրունտում իրարից 25-30սմ հեռավորության վրա, իսկ աշնանը (հոկտեմբեր), նորից տեղափոխում ջերմատուն: Թփերը ոռոգում են շաբաթը 3 անգամ:

Բազմացումը-կատարվում է թուփը կիսելով և օդային արմատներ ունեցող բուսակները վերատնկելով:

Կիրառությունը-ծաղկաթումբ, պարտեր, զարդերիզ, ամպելային ձևավորում, ինտերիերային կոմպոզիցիաներ:

Լաբորատոր-գործնական պարապմունք 8

Երկամյաներ

Անմոռուկ - Myosotis L. - Незабудка



Նկարագրությունը- գողտրիկազգիների ընտանիքին պատկանող, փնջարմատավոր, միամյա, երկամյա կամ բազմամյա, 15-40սմ բարձրության ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի 50 տեսակներից ծաղկաբուծության մեջ որպես երկամյա օգտագործվում է ալպիական անմոռուկը, որը բնականորեն աճում է բարձր լեռնային գոտիներում: Ալպիական անմոռուկն ունի մի շարք սորտեր և հիբրիդներ, դրանք անփոխարինելի են վաղ գարնանային ծաղկային ձևավորումներում: Անմոռուկի ցողունը ուղիղ է, ճյուղավորված, մազմզուկապատ, որի վրա տեղադրված են կարճ գնդաձևական մանր ծաղկաբույլերը՝ մանր, բուրմունքավետ ծաղիկներով, դրանք կապույտ են, ունեն սպիտակավուն և վարդագույն երանգներ: Մեր պայմաններում ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին: Մերմերը հավաքում են ծաղկելուց հետո:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, նախընտրում է պարարտ, խոնավ և կիսաստվերոտ հողակտորներ: Մեր պայմաններում գրեթե չի օգտագործվում՝ չնայած հեռանկարային տեսակ լինելուն: Խորհուրդ է տրվում սերմերի ցանքը կատարել ուշ աշնանը կամ վաղ գարնանը բաց գրունտում, ինչպես նաև հունվարի վերջին ջերմոցում կամ ջերմատանը:

Բազմացումը-կատարվում է սերմերով, ինչպես ծածկած, այնպես էլ բաց գրունտում, անհրաժեշտության դեպքում պետք է կատարել նոսրացում և նախասածիլում:

Կիրառությունը-վաղ գարնանային ծաղկային կոմպոզիցիաներ, թաղարային մշակություն, ծաղկեփունջ, վաղ ծաղկեցում:

Եռագույն մանուշակ-Viola tricolor L.-ФИАЛКА ТРЕХЦВЕТНАЯ



Նկարագրությունը-մանուշակագիների ընտանիքին պատկանող, 10-12սմ բարձրությամբ, բազմամյա ծաղկաբույս է, հայրենիքը Եվրոպան ու Կովկասն են: Ծաղկաբուծության մեջ օգտագործվում է որպես երկամյա ծաղկատեսակ, աչքի է ընկնում չափազանց գեղեցիկ ու առատ ծաղկող միագույն կամ բազմերանգ (սպիտակավուն, դեղին, երկնագույն, կապույտ, սև, խայտաբղետ), 4-6սմ տրամագծով, երկար ծաղկակոթունավոր մեկական պարզ ծաղիկներով: Սեր պայմաններում ամառային ցանքի դեպքում առատ ծաղկում է հաջորդ տարվա վաղ գարնանը, այնուհետև շոգերն սկսվելուն պես ծաղկման ինտենսիվությունը կտրուկ նվազում է և աստիճանաբար մարում: Գարնանային ցանքի դեպքում ծաղկում է ավելի երկար՝ մայիսից մինչև աշուն, որոշակի ընդհատումներով ու ծաղկման նվազմամբ:

Մշակությունը-լուսասեր է, աճում է նաև կիսաստվերում, նախընտրում է աճել պարարտ, թեթև հողերում, խոնավասեր է, ռոռոգում են շաբաթը 3-4 անգամ: Խորհուրդ է տրվում սածիլել բաց գրունտում մայիսի սկզբին՝ տնկելով բույսը բույսից 12-15սմ հեռավորության վրա: Սերմերը հավաքում են հունիս-հուլիս ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում փետրվարին, այդ ժամանակ սերմերը ծլում են 5-10 օրում, իսկ բաց գրունտում՝ հունիսին, որի ժամանակ սերմերը ծլում են 15-20 օրում:

Կիրառությունը-ծաղկաթունք, ծաղկային պարտեր, քարապարտեզ:

Էնոտերա - *Oenothera L.* - Энотера



Նկարագրությունը- ապուզանագիների ընտանիքին պատկանող միամյա, երկամյա կամ բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս է, հայրենիքը Ամերիկան է: Ծաղկաբուծության մեջ օգտագործվում են երկամյա էնոտերայի խոշորածաղիկ Դրոմոնդի, Լամարկի տեսակները, որոնց ցողունները ուղղաձիգ են, ամուր և ունեն 60-120սմ բարձրություն: Ծաղիկները նստադիր են, խոշոր, ունեն 4-5սմ տրամագիծ, դուրեկան հոտ և սպիտակավուն, վարդագույն ու դեղնաոսկեգույն երանգներ: Ծաղկում են հունիս-հոկտեմբեր ամիսներին՝ գիշերվա ժամերին՝ կամ ամպամած օրերին:

Մշակությունը-լավ է աճում և ցուրտ, և շոգ եղանակներին, նաև կիսաստվերում, նախընտրում է աճել թեթև խճաավազային, չափավոր խոնավ հողերով: Խորհուրդ է տրվում սածիլել սեպտեմբերին 35-40սմ միջբուսային հեռավորության վրա: Սերմերը հավաքում են օգոստոս-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով մայիս-հունիս ամիսներին սառը ջերմոցներում, սերմերը ծլում են 10-12 օրում:

Կիրառությունը-առանձնյակ, խառը ածու, ինտերիերային կոմպոզիցիաներ:

Մատնոցուկ ծիրանագույն - *Digitalis purpurea* L. - Наперстянка пурпуровая



Նկարագրությունը-խլածաղկազգի, ծայրում թեքված ցողուններով, 80-130սմ բարձրության, երկամյա ծաղկաբույս է, հայրենիքը Եվրոպան է: Ծաղկաբուծության մեջ օգտագործվում են ծիրանագույն մատնոցուկի, գլոքսինածաղիկ ու բծավոր այլատեսակներ ու սորտեր, որոնք ունեն սպիտակավուն, վարդագույն, ծիրանագույն, խայտաբղետ, 3-4սմ մեծության զանգակաձև ծաղիկներ, հավաքված միակողմանի ողկույզանման ծաղկաբույլերում: Մատնոցուկը մեր պայմաններում ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին:

Մշակությունը-լավ է աճում տաք, կիսաստվերոտ պարարտ, չափավոր չոր, թթվային, փուխր կավահողերում:Բույսերը տնկում են միմյանցից շուրջ 30սմ հեռավորության վրա:Ոռոգում են շաբաթը 2-3 անգամ:Սերմերը հավաքում են օգոստոսին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ապրիլին սառը ջերմատներում կամ մշակված բաց գրունտում մայիսի առաջին տասնօրյակին:Սերմերը ծլում են 14-17 օրում:

Կիրառությունը- լանդշաֆտային ծաղկանոց, քարապարտեզ,ծաղկեփունջ,մորիբանա:

Մարգարտածաղիկ - *Bellis*L. - Маргаритка



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, վարդակավոր, մինչև 15սմ բարձրության, ցածրածաղկավոր, բազմամյա ծաղկաբույս է: Ցեղն ունի շուրջ 80 տեսակ, որոնք վայրի վիճակում աճում են Եվրոպայում, Կովկասում և Փոքր Ասիայում: Ծաղկաբուծության մեջ, որպես երկամյա ծաղկատեսակ, օգտագործվում են բազմամյա մարգարտածաղկի սորտերն ու հիբրիդները, որոնք լինում են կիսալիաթերթ կամ լիաթերթ և աչքի են ընկնում բարձր գեղազարդությամբ: Առատ ծաղկում են ապրիլ-հունիս ամիսներին, աշնանը՝ վերստին ծաղկում: Ծաղիկները հիմնականում սպիտակ են և ունեն վարդագույն, ծիրանագույն, կարմրավուն երանգներ:

Մշակությունը-բարեհաջող աճում է լուսավոր և կիսաստվերոտ, պարարտ, փուխր, հողակտորներում, խոնավասեր է, դիմանում է թույլ ցրտերին: Բաց գրունտում սածիլները տնկում են գարնանը (ապրիլ) կամ աշնանը (սեպտեմբեր) 6-10սմ միջբուսային հեռավորությամբ: Խորհուրդ է տրվում ոռոգել շաբաթը 3-4 անգամ: Սերմերը հավաքում են ծաղկման ավարտից հետո:

Բազմացումը-կատարվում է սերմերով ծածկած գրունտում հունվար-փետրվար ամիսներին և թփիկների կիսունով՝ գարնան վերջին կամ աշնանը: Սերմերը ծլում են 10-12 օրում:

Կիրառությունը-գորգային ծաղկաթունք, ծաղկային պարտեր, քարապարտեզ, ալպիական այգի:

Մեխակ մորուքավոր - *Dianthus barbatus* L. - Гвоздика бородатая



Նկարագրությունը-մեխակազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ, թփակալած, 40-50սմ բարձրության բազմամյա ծաղկաբույս է, որը մշակվում է որպես երկամյա: Հայրենիքը Հարավային Եվրոպան է: Ծաղիկները հասարակ են կամ լիաթերթ, մինչև 2սմ տրամագծով, հովանոցաձև, կլորավուն ծաղկաբույլերում հավաքված: Առատ է ծաղկում հունիս-հուլիս ամիսներին շուրջ 35-45 օր երկարատևությամբ: Ծաղիկները կարմիր են կամ վարդագույն, երբեմն լինում են սպիտակ կամ խայտաբղետ:

Մշակությունը- լուսասեր է, լավ է աճում պարարտ, միջին խոնավության հողերում: Սածիլում են բաց գրունտում ապրիլ-մայիս ամիսներին 15-20սմ միջբուսային հեռավորությամբ, կարելի է սածիլել նաև օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի

սկզբին՝ հաջորդ տարի առատ ծաղկելու ակնկալիքով: Ոռոգման աշխատանքները իրականացվում են շաբաթը 2-3 անգամ: Սերմերը հավաքում են հուլիսին:

Բազմացումը-կատարվում է սերմերով հունվարին ծածկած գրունտում կամ մայիս-հունիս՝ ամիսներին սառը ջերմոցներում, սերմերը ծլում են 12-15 օրում: Ծլելուց հետո կատարվում է նոսրացում կամ նախասածիլում:

Կիրառությունը-խառը ածու, առանձնյակ, ամառային ծաղկաթունբ, ծաղկեփունջ, մորիբանա:

Սնդուսածաղիկ - *Lunaria* L. - Лунник



Նկարագրությունը-Կաղամբազգի, մինչև 1մ բարձրության միամյա և երկամյա ծաղկաբույս է, հայրենիքը Եվրոպան է: Ծաղկաբուծության մեջ արժեքավոր է երկամյա սնդուսածաղիկը, որի ծաղիկները խոշոր են և ունեն ծիրանամանուշակագույն կամ սպիտակավուն գունավորում: Չափազանց գեղեցիկ են նաև սնդուսածաղիկի պտուղները՝ շնորհիվ բարձր թափանցիկության և աչքի զարնող թաղանթանման կառուցվածքի: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, պտուղները գեղազարդ են ամռան երկրորդ կեսին և աշնանը:

Մշակությունը-ցրտադիմացկուն է և չորադիմացկուն, լավ է աճում պարարտ, թթու, կարբոնատային խոնավ հողերում: Մեր պայմաններում հեռանկարային ծաղկատեսակ է: Խորհուրդ է տրվում սերմերի ցանքը կատարել ապրիլին նախօրոք մշակած հողակտորներում: Սերմերը հավաքում են աշնանը:

Բազմացումը-կատարվում է սերմերով, հիմնականում՝ բաց գրունտում:

Կիրառությունը-ծաղկաթունբ, խառը ածու, առանձնյակ, ծաղկեփունջ, օսիբանա:

Տուղտավարդ - *Althaea* L. - Шток-роза



Նկարագրությունը-տուղտագգիների ընտանիքին պատկանող, խոշոր, ուղղաձիգ ցողունով, մինչև 2մ բարձրության բազմամյա ծաղկաբույս է, մշակության մեջ օգտագործվում է որպես երկամյա:Հայրենիքը Փոքր Ասիան է:Տուղտավարդն ունի բազմաթիվ սորտեր, որոնց ծաղիկները միաթերթ են կամ լիաթերթ, խոշոր, մինչև 10սմ տրամագծով, աչքի են ընկնում գունային բազմապիսի նրբերանգներով՝ սպիտակավուն, վարդագույն, դեղնավուն, մանուշակագույն և կարմրավուն: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, ցրտադիմացկուն, նախընտրում է աճել պարարտ, օդաթափանց հողերում:Տնկում են բույսը բույսից 30-40սմ հեռավորության վրա: Ոռոգումը կատարում են շաբաթը 2-3 անգամ:Սերմերը հավաքում են հուլիս-օգոստոս ամիսներին:

Բազմացումը-կատարվում է սերմերով ապրիլ-մայիս ամիսներին, սառը ջերմոցներում կամ մշակած բաց գրունտում աշնանը կամ գարնանը: Սերմերի ծլելուց 15-20 օր հետո խորհուրդ է տրվում կատարել նոսրացում կամ նախասածիլում:

Կիրառությունը-ծաղկաթումբ, խառը ածու, լանդշաֆտային ծաղկանոց:

Բացի վերոհիշյալ երկամյա ծաղկատեսակներից՝ մեր կանաչ տնկարկների համար հեռանկարային են նաև միջին զանգակածաղիկը, չինական ու շաբո մեխակները, որոնք, շնորհիվ իրենց գեղազարդ ծաղիկների ու հարմարվողականության, կարող են պիտանի լինել ծաղկային ձևավորումներում, իսկ միջին զանգակածաղիկը՝ նաև կիսաստվերոտ հողակտորներում:Հարկ է նշել,որ այս ծաղկատեսակները տարբեր ժամանակներում մշակել են առանձին պետական ու մասնավոր ծաղկաբուծական տնտեսությունները արտադրական նպատակառումներով՝ մասնավորապես կտրած ծաղիկ ստանալու համար:

Լաբրատոր-գործնական պարապմունք 9

Բազմամյաներ

Ասթիլբա - Astilbe Buch. Ham. - Астильба



Նկարագրությունը-քարեկազգիների ընտանիքին պատկանող, 30-150 սմ բարձրության գեղազարդ կոճղարմատավոր խոտաբույս է: Գիտությանը հայտնի է 35 տեսակ, որոնք աճում են արևելյան Ասիայում և հյուսիսային Ամերիկայում: Տերևները չափազանց գեղեցիկ են, բարդ, կիսավարդականման: Ծաղիկները մանր են, բազմաքանակ, հավաքված բրգաձև կամ հուրանաձև կիսակախված ծաղկաբույլերում: Ծաղիկներն ունեն սպիտակավուն, վարդագույն, կարմրավուն և մանուշակագույն երանգներ, ծաղկում են հունիս-սեպտեմբեր ամիսներին 25-45 օր տևողությամբ: Ծաղկաբուծության մեջ օգտագործվում են ասթիլբայի մի շարք հիբրիդներ, որոնք աչքի են ընկնում բարձր գեղազարդությամբ:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, խոնավասեր, լավ է աճում սննդանյութերով հարուստ, պարարտ, թեթև հողերում և կիսաստվերում: Խորհուրդ է տրվում ամռան ամիսներին հաճախակի ոռոգել: Սերմերը հավաքում են ծաղկելուց հետո:

Բազմացումը-կատարվում է գլխավորապես վեգետատիվ ճանապարհով աշնանը կամ գարնանը՝ թուփը կիսելով, կոճղարմատի վրա թողնելով 1-2 բողբոջ: Կարելի է բազմացնել նաև սերմերով:

Կիրառությունը-առանձնյակ, քարապարտեզ, լանդշաֆտային ծաղկանոց, ծաղկեփունջ, իքեբանա, մորիբանա:

Աստղածաղիկ - Aster L. — Астра



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ ճյուղավորված ցողունով, 25-150 սմ բարձրության կոճղարմատավոր ծաղկաբույս է: Գոյություն ունի ավելի քան 200 տեսակ վայրի աստղածաղիկ, որոնք տարածված են Արևելյան Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում: Ծաղիկները մանր են՝ մինչև 1սմ տրամագծով, ունեն սպիտակավուն, վարդագույն, մանուշակագույն գունավորումներ և հավաքվում են զամբյուղանման ծաղկաբույլերում: Ծաղկաբուծության մեջ օգտագործում են վայրի աստղածաղիկներից ստացված հիբրիդային՝ նոր անգլիական, նոր բելգիական և իտալական տեսակները, որոնք աչքի են ընկնում ծաղիկների բազմերանգությամբ (սպիտակ, կապույտ, վարդագույն, կարմիր, դեղին, երկնագույն), խոշորությամբ՝ 3-4 սմ, և ծաղկելու տարբեր ժամկետներով (գարուն, ամառ, աշուն):

Մշակությունը-ցրտադիմացկուն է, շոգադիմացկուն, նախընտրում է բաց, լուսավոր փուխր հողակտորներ: Խնամքի և խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ է: Ոռոգում են շաբաթը 2 անգամ: Բույսերը տնկում են մինչյանցից 30-40սմ հեռավորության վրա:

Բազմացումը-կատարվում է թուփը կիսելով, երբեմն՝ կտրոններով, սերմերով հազվադեպ են բազմացվում, քանի որ 1-1.5 տարի ծլելը կարող է ձգձգվել:

Կիրառությունը-խառը ածու, քարապարտեզ, լանդշաֆտային ծաղկանոց, ծաղկեփունջ, մորիբանա:

Արմավաշուշան - Yucca L. - Юкка



Նկարագրությունը-շուշանագգի, մինչև 2մ բարձրության, մշտադալար, կոճղարմատավոր խոտաբույս է: Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Տերևները սուր են, երկար, կաշենման, երբեմն թելիկավոր, առաջացնում են խոշոր վարդակ, ունեն կաթնականաչավուն գունավորում: Ծաղկակիր ընձյուղը դուրս է գալիս տերևավարդակի կենտրոնից, վերջինիս վրա դասավորված են զանգականման ուռուցիկ սպիտակավուն ծաղիկներից կազմված հուրանաձև ծաղկաբույլեր: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին, որոշ տեսակներ ծաղկում են կրկնակի:

Մշակությունը- ջերմասեր է, լուսասեր, գազադիմացկուն, խոնավասեր, թելատու տեսակը՝ նաև ցրտադիմացկուն: Նախընտրում է աճել կավաճմային պարարտ հողերում: Ոռոգում են շաբաթը 2 անգամ: Ծաղկելուց հետո խորհուրդ է տրվում հեռացնել ծաղկակիր ընձյուղները: Հիսաանապատային գոտու բնակավայրերի ներքաղաքային կանաչ տնկարկներում խորհուրդ է տրվում օգտագործել թելատու արմավաշուշանը, որը բավական ցրտադիմացկուն է: Սերմերը հավաքում են ծաղկելուց մեկ ամիս հետո:

Բազմացումը-կատարվում է աշնանը կամ գարնանը սերմերով, արմատածիլերով և թփի բաժանումով:

Կիրառությունը- սուլիտեր, պարտեր, ծաղկաթունբ, քարապարտեզ, ինտերիերային կոմպոզիցիա:

Արքայապսակ - Fritillaria L. - Рябчик



Նկարագրությունը-շուշանագգիների ընտանիքին պատկանող սոխուկավոր, 15-60սմ, երբեմն ավելի բարձր ծաղկաբույս է: Ցեղը ընդգրկում է շուրջ 100 տեսակ, որոնք տարածված են Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի մայրցամաքների բարեխառն կամ մերձարևադարձային գոտիների մարգագետիններում ու տափաստաններում: Սոխուկները կլորավուն են, թույլ ձգված, տարբեր չափերի, պատած սպիտակավուն մսալի թեփուկներով: Ցողունը կանգուն է, տերևներն ունեն հերթադիր կամ օղակաձև դասավորություն: Ծաղիկները զանգականման են, խոնարհված, մեկական կամ փնջերով, ունեն դեղնավուն, նարնջագույն, սպիտակավուն, կարմրավուն կամ

խայտաբղետ գունավորումներ, ծաղկում են 14-17 օր: Հայաստանում բնականորեն աճում է 5 տեսակի գեղազարդ արքայապսակ: Մշակության մեջ, շնորհիվ կարմրամարնագույն, սպիտակավուն խոշոր ծաղիկների ու բարձր գեղազարդության, լայն տարածում ունի թագավորական արքայապսակը, այն բնականորեն աճում է Հիմալայներում, Աֆղանստանում և Իրանում: Ներկայումս ծաղկաբուծության մեջ օգտագործում են այդ տեսակի մի շարք գեղազարդ հիբրիդներ ու սորտեր:

Մշակությունը-թագավորական արքայապսակը թեթև ցրտադիմացկուն է, հասուն սոխերը հազվադեպ են ցրտահարվում, այդուհանդերձ խորհուրդ է տրվում ձմռան նախաշեմին դրանք ծածկել հարդով կամ տերևներով: Ծաղկելուց հետո, երբ տերևները սկսում են դեղնել և թռչնել, անհրաժեշտ է սոխերը հանել, հեռացնել չոր թեփուկները, մշակել կալիում պերմանգանատի թույլ լուծույթով, հետո լավ չորացնել: Աշնանը, երբ սոխերի վրա առաջանում են մոր ծիլեր ու արմատներ, կարելի է տնկել բաց գրունտում: Հայաստանի ֆլորայում աճող տեսակները ցրտադիմացկուն են:

Բազմացումը- հիմնականում կատարվում է սոխուկներով աշնանը, բազմանում են նաև սերմերով, որը նպատակահարմար չէ, քանի որ ծաղկումը բավականին ուշանում է:

Կիրառությունը-առանձնյակ, քարապարտեզ, գարնանային ձևավորումներ, ծաղկեփունջ:

Աստղաշուշան - OrnithogalumL. - Птицемлечник



Նկարագրությունը-շուշանագիների ընտանիքին պատկանող սոխուկավոր, վարդակավոր 10-80 սմ բարձրության ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի 300 տեսակներից 10 բնականորեն աճում են մեր հանրապետությունում: Սոխուկները ձվաձև են, կլորավուն, տերևները՝ գծանման, տափակավուն, ծաղիկները՝ 1,5-3սմ տրամագծով, սպիտակավուն՝ հավաքված ողկույզանման կամ վահանիկանման ծաղկաբույլերում:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, խոնավասեր, լավ է աճում փուխր, սննդանյութերով հարուստ հողերում: Սոխերը տնկում են աշնանը, կարելի է տնկել նաև գարնանը բաց գրունտում:

Բազմացումը-կատարվում է դուստր սոխուկներով գարնանը կամ աշնանը, կարելի է բազմացնել նաև սերմերով մույն ժամանակահատվածում:

Կիրառությունը- քարապարտեզ, ալպիական այգի, գարնանային ձևավորումներ:



Նկարագրությունը-Խլածաղկազգիների ընտանիքին պատկանող ձմեռականաչ, առանցքաարմատավոր, կիսաթփիկանման քամեֆիտ է:Գիտության մեջ հայտնի 300 տեսակ բերենիկեներից 30-ը հանդիպում է Հայաստանում,որից բարձր գեղազարդությամբ առանձնանում է հայկական բերենիկեն:Բերենիկեի այս տեսակը աճում է բարձր լեռնային, հատկապես քարքարոտ լանդշաֆտներում: Լավ է աճում նաև կիսանապատային գոտու կլիմայական պայմաններում, որտեղ, ի տարբերություն բնական լանդշաֆտների,աչքի է ընկնում իր փարթամությամբ և բարձր գեղազարդությամբ:Ծաղիկները մանր են,հավաքված կարճ հասկանման ծաղկաբույլերում,ունեն կապտաերկնագույն գունավորում,արձակում են թույլ, հաճելի հոտ:Առատորեն ծաղկում է մարտ-մայիս ամիսներին,որից հետո ծաղկելու առատությունը նվազում է և կրում պարբերական բնույթ:Ծաղկաբուծության մեջ օգտագործվում են բերենիկեի մի շարք սորտեր ու հիբրիդներ,որոնք աչքի են ընկնում բարձր գեղազարդությամբ ու էկոլոգիական ճկունությամբ:

Մշակությունը-ցրտադիմացկուն է,շերմադիմացկուն,հողի նկատմամբ քիչ պահանջկոտ, չափավոր խոնավասեր:Մշակության մեջ ապահովում է ինքնացան վերարտադրություն:Խուհուրդ է տրվում ամռան ամիսներին ոռոգել շաբաթը մեկ անգամ,իսկ մյուս ժամանակահատվածներում՝ըստ անհրաժեշտության:

Բազմացումը-իրականացվում է հիմնականում սերմերով,հազվադեպ՝ նաև ընձյուղային կտրոններով:Սերմերը հասունանում են հունիս-սեպտեմբեր ամիսներին,դրանց ցանքը խորիւրդ է տրվում կատարել աշնանը կամ գարնանը բաց գրունտում:Սերմնաբույսերը սկսում են ծաղկել ցանքի երկրորդ տարում:

Կիրառությունը-քարապարտեզ,ալպիական այգի,գորգային ծաղրաթումբ, ճանապարհամերձ թեքություններ:

Քոքենի - Phlox L. - Пламенник



Նկարագրությունը-կապտուկազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ ցողուններով, 40-100սմ բարձրության գեղազարդ ծաղկաբույս է, ցեղուն կան տեսակներ, որոնք կարճահասակ՝ 10-25սմ են և ունեն բարձիկանման հաբիթուս: Ծաղիկներն ունեն 1,5-2սմ տրամագիծ, աչքի են ընկնում սպիտակ, վարդագույն, մանուշակագույն, կարմիր, բաց կապտավուն գունավորումներով և հավաքված են բրգահովանոցանման կամ բրգազնդանման ծաղկաբույլերում: Քոքենու տարբեր հիբրիդային խմբեր ծաղկում են գարնանը, ամռանը և աշնանը 40-50օր տևողությամբ:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, լուսասեր, լավ է աճում նաև կիսաստվերում, նախընտրում է աճել պարարտ, փուխր հողերում: Տնկում են Բույսը բույսից 20-25սմ հեռավորությամբ հոկտեմբերին կամ հաջորդ տարվա գարնանը: Խորհուրդ է տրվում ոռոգել շաբաթը 2 անգամ: Սերմերը կարելի է հավաքել ծաղկելուց մեկ ամիս անց:

Բազմացումը-կատարվում է թուփը կիսելով, ցողունային կտրոններով, երբեմն՝ նաև սերմերով: Թփերի կիսումը ակտիվացնելու նպատակով խորհուրդ է տրվում բույսի մերձգետնյա հատվածը ծածկել փուխր հողով, որպեսզի արմատներ առաջանան: Մեկ թփից կարելի է ստանալ 4-6 նոր բույս:

Կիրառությունը-Ածու, խառը ածու, առանձնյակ, լանդշաֆտային ծաղկանոց, ծաղկեփունջ, մորիբանա:

Գայլարդիա - Gaillardia Foug. – Гайлардия



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ ճյուղավորված, թավոտ ցողուններով, 45-60 սմ բարձրության բազմամյա, երբեմն՝ միամյա ծաղկաբույս է: Գիտության մեջ հայտնի է մոտ 20 տեսակ գայլարդիա, որոնք բնականորեն աճում են Ամերիկայում: Ծաղկաբուծության մեջ լայն տարածում ունեն հիբրիդային գայլարդիայի մի շարք սորտեր, որոնք ստացվել են վայրի տեսակների տրամախաչումից և աչքի են ընկնում երկարավուն, բլթակավոր, արծաթավուն տերևներով ու ծաղիկների գեղազարդությամբ: Ծաղիկները դեղնանարնջագույն են կամ նարնջակարմրավուն, 5-6սմ տրամագծով, նման լեզվակի՝ հավաքված 5-8(10)սմ տրամագծով կիսալիաթերթ կամ լիաթերթ զամբյուղանման ծաղկաբույլերում: Ծաղկում է հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-լուսասեր է, ջերմասեր, հողի և խոնավության նկատմամբ չափավոր պահանջկոտ: Բույսերը տնկում են միմյանցից 15-20սմ հեռավորությամբ: Ոռոգում են շաբաթը 2-3 անգամ: Սերմերը հավաքում են աշնանը:

Բազմացումը-կատարվում է սերմերով, որոնց ծլեցումը կազմակերպվում է ջերմոցներում կամ ջերմատներում հունվարի 2-րդ կեսին: Սերմերը ծլում են 20-25 օրում: Կարելի է բազմացնել նաև արմատային ծիլերով:

Կիրառությունը-առանձնյակ, ծաղկաթումբ, քարապարտեզ, խառը ածու, ծաղկեփունջ, իքեբանա, մորիբանա:

Գարնանածաղիկ (Գնարբուկ) – Primula L. - Первоцвет



Նկարագրությունը-գարնանածաղկազգիների ընտանիքին պատկանող, փնջարմատավոր կամ կոճղարմատավոր, մինչև 30սմ բարձրության ծաղկաբույս է, դրանք բնականորեն աճում են հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտիների անտառներում, մերձալպյան ու ալպյան մարգագետիններում: Գիտության մեջ հայտնի 600 տեսակ գարնանածաղիկներից շուրջ 60-ը՝ իրենց այլատեսակներով, հիբրիդներով ու սորտերով, լայն կիրառություն ունեն ծաղկաբուծության մեջ: Գարնանածաղիկի տարբեր տեսակների ծաղիկները միաթերթ են, կիսալիաթերթ ու լիաթերթ, ունեն 1,5-3սմ տրամագիծ և հավաքված են հովանոցանման կամ գլխիկանման ծաղկաբույլերում: Ծաղիկներն ունեն բաց դեղնավուն, դեղնանարնջագույն, վարդամանուշակագույն, սպիտակավուն և նարնջակարմրավուն գունավորումներ: Մեր պայմաններում գարնանածաղիկը ծաղկում է մարտ-մայիս

ամիսներին, որոշ տեսակներ կրկնակի են ծաղկում նաև աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-խոնավասեր է, լավ է աճում կիսաստվերոտ և ստվերոտ հողակտորներում, նախընտրում է թթվային, տորֆային, հարուստ, թեթև հողեր: Բույսը բույսից տնկում են 8-12սմ հեռավորության վրա՝ աշնանը կամ վաղ գարնանը նախօրոք մշակված հողակտորներում: Սերմերը հավաքում են ամռանը կամ աշնանը:

Բազմացումը-կատարվում է սերմերով հունվարին ծածկած գրունտում կամ բաց գրունտում՝ հոկտեմբերին, բազմացվում է նաև թուփը կիսելով, երբեմն տերևային կտրոններով: Սերմերը ծլում են 25-30 օրում:

Կիրառությունը-քարապարտեզ, ալպիական այգի, առանձնյակ, գարնանային գորգային ծաղկաթունք:

Երիցուկ – *Matrikaria L.* – Ромашка



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ կամ ճյուղավորված, թավոտ ցողուններով, կիսավարդակավոր, փնջարմատավոր կամ կոճղարմատավոր, մինչև 150սմ բարձրության բազմամյա ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է շուրջ 100 տեսակ, որոնք աճում են Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում, իսկ դրանցից 20-ը՝ Հայաստանում: Տերևները գեղազարդ են, հերթադիր, փետրաբաժան, երբեմն՝ ամբողջական: Ծաղիկները կազմում են միայնակ զամբյուղ կամ հավաքված են վահանաձև ծաղկաբույլերում: Կողքային ծաղիկները լեզվակավոր են, կենտրոնականները՝ խողովակաձև: Ծաղկաբուծության մեջ լայն տարածում ունեն խոշորածաղիկ, վարդագույն և վառ կարմիր երիցուկների այլատեսակները, հիբրիդներն ու սորտերը, որոնք ունեն 60-100սմ բարձրություն: Ծաղիկները կիսալիաթերթ են կամ լիաթերթ, խոշոր՝ 4-8սմ տրամագծով, աչքի են ընկնում սպիտակավուն, վարդագույն և վառ կարմիր գունավորումներով: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին՝ շուրջ 45 օր տևողությամբ: Երբեմն խոշորածաղիկ երիցուկ աշնանը կրկնակի թույլ ծաղկում է:

Մշակությունը-լուսասեր է, լավ աճում է սննդանյութերով հարուստ հողերում, նաև կիսաստվերում: Խոնավության նկատմամբ չափավոր պահանջկոտ է: Տնկում են բույսը բույսից 25-30սմ հեռավորությամբ աշնանը կամ գարնանը: Սերմերը հավաքում են ծաղկելուց մեկ ամիս հետո:

Բազմագունը-կատարվում է սերմերով, թուփը կիսելով և արմատածիլերով: Սերմերը կարելի է ցանել բաց գրունտում աշնանը կամ գարնանը: Ծածկած գրունտի պայմաններում սերմերի ցանքը կատարվում է հունվարի 2-րդ կեսին, դրանք ծլում են 10-15 օրում:

Կիրառությունը-առանձնյակ, լանդշաֆտային ծաղկանոց, խառը ածու, քարապարտեզ, ծաղկեփունջ, մորիբանա:

Թաղաղու – Asphodeline Reichd. - Асфоделина



Նկարագրությունը-շուշանագգի, մինչև 60 սմ բարձրության, վարդակավոր, փնջարմատավոր գեղազարդ ծաղկաբույս է: Հայրենիքը Կովկասն ու Ղրիմն են, գիտությանը հայտնի 15 տեսակներից 2-ը աճում են Հայաստանի ֆլորայում: Շնորհիվ բազմաքանակ գծափշանման, նեղեռանիստ, կաթնագույն տերևների՝ Ղրիմյան թաղաղուն կարելի է դասել նաև տերևագեղազարդ ծաղկաբույսերի շարքում: Ծաղիկները մանր են, սպիտակավուն երբեմն՝ դեղնավուն հավաքված խիտ հասկանման ծաղկաբույլերում: Մեկ բույսը առաջացնում է 2-3 ծաղկացողուն: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին շուրջ մեկ ամիս տևողությամբ:

Մշակությունը-բավական ցրտադիմացկուն է, լուսասեր, խոնավասեր, փարթամորեն աճում է սննդանյութերով հարուստ սևահողերում, լավ է տանում նաև շոգը: Խորհորդ է տրվում ոռոգել շաբաթը մեկ անգամ:

Բազմագունը-կատարվում է ինչպես սերմերով, այնպես էլ վեգետատիվ ճանապարհով: Բաց գրունտում սերմերը ցանում են ուշ աշնանը. այդ ժամանակ ծլունակությունը կազմում է ավելի քան 60%, իսկ ծածկած գրունտում՝ վաղ գարնանը արկղների մեջ: Սերմնաբույսերը ծաղկում են 4-5 տարում: Վեգետատիվ բազմացման ժամանակ անհրաժեշտ է թուփը հանել հողից, զգուշությամբ բաժանել մի քանի մասի և անմիջապես վերատնկել նոր տեղում, այդպես դրանք ծաղկում են 2-3 տարում:

Կիրառությունը-սոլիտեր, քարապարտեզ:

Իրիդոդիքտիում ցանցավոր - *Iridodictyum reticulatum* (Bieb.) Rodion.- Иридодиктиум сетчатый



Նկարագրությունը-հիրիկազգիների ընտանիքին պատկանող 10-15սմ բարձրությամբ, պալարաստիտուկավոր, վարդակավոր գեոֆիտ է: Հայաստանում տարածված է նախալեռնային ու լեռնային կիսաանապատներում և լեռնատափաստաններում: Ծաղիկները միայնակ են, 4-5սմ տրամագիծով, ունեն մանուշակագույն, երկնագույն կամ բաց վարդագույն գունավորում և հաճելի, նուրբ բուրնունք: Ծաղկում է մարտի վերջին 17-22 օր տևողությամբ: **Մշակությունը**-ցրտադիմացկուն է, լուսասեր, լավ է աճում թեթև, պարարտ, չեզոք կամ թույլ թթվային հողերում, խնամքի աշխատանքների նկատմամբ ունի չափավոր պահանջկոտություն:

Բազմացումը-հրականացվում է սերմերով և դուստր պալարաստիտուկներով: Սերմերը հավաքում են հուլիսին, իսկ ցանքը կատարում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բաց գրունտում: Վեգետատիվ բազմացման ժամանակ՝ բույսի հարաբերական հանգստի փուլում, խորհուրդ է տրվում պալարաստիտուկի շրջանում փորել հողը, զգուշությամբ առանձնացնել դուստր պալարաստիտուկները ու տնկել նախօրոք մշակած հողակտորում: Սերմնաբույսերը սկսում են ծաղկել 4-5, իսկ պալարաստիտուկները՝ 3-4 տարում:

Կիրառությունը-քարապարտեզ, ալպիական այգի, գարնանային ձևավորում, ծաղկեփունջ:

Լուպին - Lupinus L. – Люпин



Նկարագրությունը–թիթեռնաձողկավորների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ, գրեթե մերկ ցողուններով, խոշոր, մինչև 150սմ բարձրության, առանցքաարմատավոր, միանյա կամ բազմանյա ծաղկաբույս է։ Ցեղում կա շուրջ 200 տեսակ, որոնք վայրի վիճակում աճում են Հյուսիսային Ամերիկայում և Միջերկրածովյան երկրներում։ Ծաղկաբուծության մեջ բազմանյա լուպիններից հիմնականում օգտագործում են բազմաձողկավոր տեսակը՝ իր այլատեսակներով ու սորտերով։ Տերևները բարդ են թաթանման, երկար կոթուններով՝ դասավորված ցողունի ստորին մասում, ավելի բարձր, ողկուզանման ծաղկաբույլերից կազմված, ծաղկակիր ցողունն է։ Ծաղիկներն ունեն սպիտակավուն, դեղնավուն, վարդագույն, մանուշակագույն, կապտավուն գունավորում։ Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին։

Մշակությունը–ցրտադիմացկուն է, լուսասեր, վատ չի աճում կիսաստվերում, նախընտրում է աճել ավազակնձիկային թթու հողերում։ Տնկում են Բույսը բույսից 14-18սմ հեռավորությամբ։ Ոռոգում են շաբաթը 2 անգամ։ Սերմերը հավաքում են ծաղկելուց հետո։

Բազմացումը–կատարվում է սերմերով, երբեմն՝ նաև կանաչ կտրոններով։ Սերմերի ցանքը կարելի է կատարել աշնանը կամ գարնանը բաց գրունտում, իսկ հունվարին՝ ջերմոցներում։ Սերմերը ծլում են 18-24 օրում։

Կիրառությունը–առանձնյակ, խառը ածու, ամառային ծաղկաթունք, ծաղկեփունջ, մորիբանա։

Կնիֆոֆիա - Kniphofia Moench - Книфофия



Նկարագրությունը-թաղադուլազգիների ընտանիքին պատկանող, 60-120սմ բարձրության կոճղարմատավոր, գեղազարդ ծաղկաբույս է, գիտությանը հայտնի է շուրջ 75 տեսակ, որոնք աճում են հարավային և կենտրոնական Աֆրիկայում: Մշակության մեջ հետաքրքրություն է ներկայացնում հիբրիդային կնիֆոֆիան՝ իր բազմապիսի սորտերով: Ծաղիկները հավաքված են հասկանման ծաղկաբույլերում և ունեն նարնջագույն, կարմրավուն, ծիրանագույն գունավորումներ: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին:

Մշակությունը-ջերմասեր է, չափավոր խոնավասեր, լավ է աճում սննդանյութերով հարուստ, ջրաթափանց, կավավազային հողերում: Սածիլումը կատարվում է մայիսի 2-րդ կեսին բաց գրունտում՝ մեկը մյուսից 30-40սմ հեռավորության վրա: Ծաղկում է տնկման 2-րդ տարում, ջերմատնից տեղափոխված թփերը ծաղկում են նույն տարում: Խորհուրդ է տրվում շաբաթը ոռոգել 2 անգամ: Սերմերը հավաքում են աշնանը:

Բազմացումը-կատարվում է սերմերով և կոճղարմատը կիսելով: Սերմերի ցանքը կատարվում է փետրվար-մարտ ամիսներին ծածկած գրունտում՝ ծաղկարկղների մեջ, սերմերը ծլում են 18-22 օրում: Կոճղարմատը կիսում են այնպես, որ յուրաքանչյուրում լինի 3-4 աչք (բողբոջ):

Կիրառությունը-առանձնյակ, աշնանային ծաղկաթունք, խառը ածու, քարապարտեզ, ծաղկեփունջ, իքեբանա, մորիբանա:

Կուսածաղիկ - Vinca L. - Барвинок



Նկարագրությունը-շմանեռուկազգիների ընտանիքին պատկանող, 15-20սմ բարձրության ձմեռնականաչ խոտաբույս է: Հայտնի է 7 տեսակ կուսածաղիկ, որոնց հայրենիքը Միջերկրական ծովի ավազանի երկրներն են: Ցողունը հիմնականում պառկած է, տերևները՝ կաշեման: Ծաղիկը միայնակ է, պարզ, 3-5սմ տրամագծով, կապտամանուշակագույն է, ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, երբեմն կրկնակի ծաղկում է նաև աշնանը:

Մշակությունը-լավ է աճում կիսաստվերոտ, պարարտ, խոնավ հողակտորներում: Բույսի տունկը կատարում են աշնանը կամ գարնանը՝ մեկը մյուսից 20-25սմ հեռավորությամբ: Խորհուրդ է տրվում ոռոգել շաբաթը 2 անգամ:

Բազմացումը-հաջողությամբ բազմանում է թուփը կիսելով և անդալիսով, կարելի է բազմացնել նաև ցողունային կտրոններով:

Կիրառությունը-գորգային ձևավորում, քարապարտեզ, կիսաստվերային և ինտերիերային կոմպոզիցիաներ:

Հակինթ - Hyacinthus L.. – Гиацинт



Նկարագրությունը-շուշանագգի, սոխուկավոր, մինչև 20սմ բարձրության, գեղազարդ ծաղկաբույս է:Ցեղը մոնոտիպ է, ունի մեկ տեսակ՝ հակինթ արևելյան, որը վայրի վիճակում աճում է միայն Միջերկրական ծովի արևելյան երկրներում (Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Հունաստան):Ցերենները երկարավուն են, հյութալի, փայլուն, վարդականման, որոնց կենտրոնում սոխից դուրս է գալիս ծաղկակիր ցողունը՝ բազմաթիվ ծաղիկներից կազմված խողովակաձևականման ծաղկաբույլերով: Ծաղիկները միաթերթ կամ լիաթերթ են, զանգականման, ունեն սպիտակավուն, մանուշակագույն, երկնագույն, վարդագույն, կարմրավուն, դեղնավուն, կապտավուն գունավորումներ և նուրբ դուրեկան բուրմունք:Ծաղկում է ապրիլին՝ մոտավորապես 20 օր տևողությամբ:

Մշակությունը-լուսասեր է, խոնավասեր, նախընտրում է աճել թեթև, մշակված, ջրաթափանց, պարարտ հողերում:Սոխերը տնկում են հոկտեմբերի 2-րդ կեսին փուխր, մշակված հողում 6-8սմ խորությամբ և 6-8սմ հեռավորությամբ: Ծաղկելուց հետո, երբ տերևները դեղնում են, սոխերը հանում են հողից, տեսակավորում և պահում չոր, մութ նկուղներում:

Բազմացումը- կատարում են սոխուկներով գարնանը՝ մայիսի վերջին կամ հունիսի սկզբին՝ տարբեր չափի սոխուկներով:Սելեկցիոն նպատակներով բազմացվում է նաև սերմերով:

Կիրառությունը-վաղ գարնանային ծաղկային ձևավորումներ, քարապարտեզ, առանձնյակ, ածու, ծաղկեփունջ, իքեբանա:

Համասփյուռ - *Lychnis L.* – Зорька



Նկարագրությունը-մեխակազգիների ընտանիքին պատկանող, 40-100սմ բարձրության, ուղղաձիգ ցողունով, բազմամյա ծաղկաբույս է:Գիտությանը հայտնի է շուրջ 50 տեսակ, որոնք աճում են հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտիներում: Ծաղկաբուծության մեջ լայն տարածում ունի հալցեդոնյան համասփյուռը, որի ծաղիկները հիմնականում կրակակարմրավուն են, հազվադեպ լինում են նաև այլ երանգների, դրանք հավաքված են վահանաձև կամ գլխիկանման ծաղկաբույլերում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին 30-50 օր տևողությամբ:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, ցրտադիմացկուն, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ, լավ է աճում բաց, արևոտ տարածքներում: Խորհուրդ է տրվում ոռոգել շաբաթը 1-2 անգամ:Սածիլներ ստանում են ապրիլ-մայիս ամիսներին սառը ջերմոցներում, որից հետո իրականացվում է նոսրացում, սածիլները տնկում են բաց գրունտում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Բազմացումը-կատարում են գարնանը ծածկած գրունտում սերմերով,իսկ աշնանը կամ գարնանը թուփը կիսելով:

Կիրառությունը- խառը ածու, լանդշաֆտային ծաղկանոց, ծաղկեփունջ, մորիբանա:

Հիրիկ - *Iris L.* – Касатик




Նկարագրությունը-հիրիկազգիների ընտանիքին պատկանող, վարդակավոր կամ կիսավարդակավոր, 10-100սմ բարձրության կոճղարմատավոր ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է 200 տեսակ հիրիկ, որոնք շնորհիվ էկոլոգիական ճկունության, տարածված են գրեթե ամենուրեք: Հայաստանում վայրի վիճակում աճում են 12 տեսակ հիրիկ, որոնց շարքում, շնորհիվ բարձր գեղազարդության, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում շքեղ և տարօրինակ հիրիկները: Ծաղկաբուծության մեջ օգտագործվող պարտիզային հիրիկները պայմանականորեն դասակարգվում են 10 խմբում՝ մորուքավոր, հիբրիդային, ճապոնական, ռեմոնտանտ և այլն: Դրանք ստացվում են վայրի տարբեր տեսակի հիրիկներից տրամախաչման ճանապարհով: Հիրիկի տերևները սուր են, տափակ, ծաղկակիր ցողունը ուղղաձիգ է, նրա վրա դասավորված են միայնակ ծաղիկները կամ նոսրածաղիկ ծաղկաբույլերը: Ծաղիկները բուրումնավետ են, խոշոր, մինչև 12սմ տրամագծով, կազմված երեքական պսակաթերթիկների երկու շրջանից, որոնցից մեկը ուղղված է վեր, մյուսը՝ հորիզոնական է կամ կիսակախված: Հիրիկի ծաղիկները աչքի են ընկնում գույների ու երանգների խիստ բազմազանությամբ՝ սկսած սպիտակից մինչև սև, որով էլ պայմանավորվում է նրա անվանումը՝ իրիս, որը հունարեն նշանակում է ծիածան: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին:

Մշակությունը-հիրիկները լուսասեր են, շատ տեսակներ վատ չեն աճում նաև կիսաստվերում: Հողի և խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ են: 2-3 տարին մեկ անգամ խորհուրդ է տրվում թփերը կիսել և վերատնկել: Տնկում են բույսը բույսից 25-30սմ հեռավորությամբ:

Բազմացումը-կատարում են աշնանը կամ գարնանը կոճղարմատը բաժանելով: Խորհուրդ է տրվում կոճղարմատը կիսել սուր դանակով այնպես, որ յուրաքանչյուր հատված ունենա 3-5 բողբոջ, կտրվածքները մշակվում են փայտածուխի փոշով կամ հատուկ քսուքներով: Սերմերով բազմացում կատարում են սելեկցիոն նպատակներով:

Կիրառությունը-առանձնյակ, խառը ածու, քարապարտեզ, պարտեզ, մորիբանա, իքերանա:

ճոճուկ - Cerastium L. – Ясколка



Նկարագրությունը- մեխակազգի, կոճղարմատավոր, սողացող ընձյուղներով, 25-30սմ երկարության գորգային ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է շուրջ 100 տեսակ, որոնք տարածված են Եվրոպայում և Ասիայում, մասնավորապես մերձալպյան ու ալպյան գոտիներում: Գեղազարդ պարտիզագործության մեջ օգտագործում են մի քանի տեսակ՝ իրենց սորտերով, դրանցից են՝ Շովիցի, Բիբերշտեյնի, թավշոտ և

ծիրանագույն ճռճուկները, որոնք ունեն սպիտակաթափալուն, մանր, լանցետանման տերևներ և աստղանման 1-2,5սմ տրամագծով սպիտակ, թույլ հոտավետ ծաղիկներ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, մոտավորապես 45 օր տևողությամբ, երբեմն կրկնակի է ծաղկում աշնանը:

Մշակությունը - ցրտադիմացկուն է, լուսասեր, վատ չի աճում նաև կիսաստվերում: Նախընտրում է կավավազային, պարարտ հողեր: Բաց գրունտում տնկումը կատարվում է հողագնդով գարնանը և աշնանը: Սերմերը հավաքում են ծաղկելուց հետո:

Բազմացումը - կատարվում է սերմերով, ընծյուղային կտրոններով, կոճղարմատներով: Սերմերի ցանքը կարելի է կատարել ծածկած գրունտում հունվար-փետրվար ամիսներին, իսկ բաց գրունտում՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Կիրառությունը - քարապարտեզ, ալպիական այգի, գորգային ծաղկաթունք:

Յունո կովկասյան - *Juno caucasica* (Hoffm.Klatt) - Юнона кавказская



Նկարագրությունը - հիբիկազգիների ընտանիքին պատկանող, միջև 20սմ բարձրության պալարասոխուկավոր գեոֆիտ է: Հայաստանում հանդիպում է լեռնա և մարգագետնատափաստաններում: Տերևները մանգաղանման են, սպիտակավուն երիզներով: Ծաղիկները դեղնասպիտակավուն են, ունեն 4-5սմ բարձրություն և նույնքան էլ լայնություն, ծաղկացողունի վրա լինում են 2-5 ծաղիկներ, երևանի պայմաններում ծաղկում է ապրիլին՝ մոտ մեկ ամիս տևողությամբ:

Մշակությունը - ցրտադիմացկուն է, վատ է աճում գերխոնավ հողերում, նախընտրելի են թեթև, օդաթափանց ու արևոտ հողակտորները:

Բազմացումը - իրականացվում է սերմերով և վեգետատիվ եղանակով: Սերմերը հավաքում են հունիսի վերջին, իսկ ցանքը կատարում բաց գրունտում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Վեգետատիվ բազմացումը կատարվում է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին դուստր պալարասոխուկների օգնությամբ: Երկու դեպքում էլ բույսերը ծաղկում են 4-5 տարում:

Կիրառությունը - գարնանային ձևավորումներ, քարապարտեզ ալպիական այգի, ծաղկեփունջ:

Նարգես - Narcissus L. - Нарцисс



Նկարագրությունը-շքանարգիզագգիների ընտանիքին պատկանող, մինչև 40սմ բարձրության, սոխուկավոր ծաղկաբույս է:Գիտությանը հայտնի է մոտ 60 տեսակ նարգես, որոնք բնականորեն աճում են միջերկրածովյան ավազանի երկրներում: Տերևները գծանման են, համեմատաբար լայն, 2-4 հատ, կազմում են մերձարմատային փունջ:Ծաղկակիր ընձյուղը տերևազուրկ է, նրա վրա են գտնվում միայնակ ծաղիկներ, երբեմն էլ՝ մի քանի ծաղիկներից բաղկացած ողկուզանման ծաղկաբույլեր:Ծաղիկները խոշոր են, հոտավետ, երբեմն՝ լիաթերթ, ուղղաձիգ կամ խոնարիված, ունեն սպիտակավուն կամ դեղնավուններանգ, կենտրոնում՝ վառ կարմիր կամ նարնջակարմրավուն փոքրիկ թագանման պսակ:Ծաղկաբուծության մեջ վայրի աճող նարգեսների տրամախաչումից ստացվել են հազարավոր սորտեր ու հիբրիդներ, որոնք աչքի են ընկնում ծաղիկների խոշորությամբ (5-9սմ), ձևով ու կառուցվածքով՝ փողրակավոր, թագիկավոր, խոշորաթագիկավոր, լիաթերթ և այլն: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին 15-20օր տևողությամբ:

Մշակությունը-ջերմասեր է, լուսասեր, նախընտրում է աճեփլ թեթև, ավազային, սննդանյութերով հարուստ հողերում:Սոխուկների տնկումը բաց գրունտում կատարվում է հոկտեմբերին 10-15սմ խորությամբ և 15-20սմ հեռավորությամբ: Բույսի տերևները դեղնելուց հետո սոխուկները հանում են հողից,տեսակավորում և պահպանում հատուկ նկուղներում:

Բազմացումը-կատարում են սոխուկներով, գարնանը բույսի ծաղկումից հետո: Սերմերով բազմացնում են սելեկցիոն նպատակներով:

Կիրառությունը-ածու, առանձնյակ, պարտեր, քարապարտեզ, ծաղկեփունջ, իքերանա, մորիբանա:

Ոսկեդենիկ (գեդորաշուշան) - Hemerocallis L. - Лилейник



Նկարագրությունը-շուշանագգի, վարդակավոր, 50-100սմ բարձրության, պալարակոճղարամատավոր ծաղկաբույս է: Հայտնի է մոտ 25 տեսակ, հայրենիքը Ա-րևելյան Ասիան է: Ծաղկաբուծության մեջ տրամախաչման ճանապարհով ստացվել են բազմաթիվ հիբրիդներ ու սորտեր, որոնք, ըստ բույսի բարձրության, դասակարգվում են 3 խմբի՝ կարճահասակ՝ մինչև 30սմ, միջահասակ՝ 30-80սմ և բարձրահասակ՝ 80սմ և ավելի: Ոսկեդենիկի տերևները մերձարմատային են, լայն գծանման, սուր, ուղիղ կամ աղեղնաձև: Ծաղիկները խոշոր են՝ 7-12 սմ տրամագծով, հիմնականում՝ ձագարանման, ունեն դեղնավուն, ոսկեդեղնավուն, նարնջագույն, նարնջակարմրավուն, հազվադեպ՝ վարդագույն, սպիտակավուն և կարմրավուն գունավորումներ: Մեր պայմաններում լայն տարածում ունեն շիկակարմրավուն ոսկեդենիկի սորտերը, որոնք սկսում են ծաղկել հունիս-օգոստոս ամիսներին:

Մշակությունը-լուսասեր է, ցրտադիմացկուն, հողի և խոնավության նկատմամբ քիչ պահանջկոտ: Բույսերը տնկում են միմյանցից 25-30սմ հեռավորության վրա: Լավ է աճում կիսաստվերում և ջրաավազանների շրջակայքում:

Բազմացումը-հրականացվում է քիերի կիսունով, գարնանը կամ աշնանը:

Կիրառությունը-առանձնյակ, խառը ածու, քարապարտեզ, ծաղկեփունջ, իքեբանա, մորիբանա:

Զխին (այծոտն) - Aegorodium L. - Снитъ



Նկարագրությունը-նեխուրազգիների ընտանիքին պատկանող տերևագեղազարդ, 20-30 սմ բարձրության, կոճղարմատավոր խոտաբույս է: Հայտնի է մեկ տեսակ՝ սովորական չխիմ, որը աճում է Կենտրոնական Եվրոպայում, Կովկասում և Արևելյան Ասիայում: Ծաղկաբուծության մեջ օգտագործվում է սովորական չխիմի խայտաբղետ հիբրիդը, այն ունի մինչև 60սմ բարձրություն: Տերևները չափազանց գեղազարդ են, հիմնականում՝ երեքական՝ դասավորված բաց կանաչավուն ընծյուղների գագաթնային մասում: Տերևները ատամնաեզր են, սրտաձև կամ նշտարաձև, եզրային մասերում՝ սպիտակավուն, որոշ տերևներ կիսով չափ են սպիտակավուն: Սերմերը հավաքում են մայր բույսից՝ ծաղկելուց 25-35օր անց:

Մշակությունը-լավ է աճում պարարտ, մշակված, թեթև կիսաստվերոտ հողերում, խոնավասեր է: Տնկում են Բույսը բույսից 15-20սմ հեռավորության վրա: Խորհուրդ է տրվում ոռոգել շաբաթը 3 անգամ:

Բազմացումը-կատարվում է սերմերով և կոճղարմատը կիսելով, վերջինը ավելի նպատակահարմար է: Սերմերի ցանքը կատարում են ջերմոցում կամ ջերմատանը հունվար-փետրվար ամիսներին, որոնք ծլում են 30-35 օրում:

Կիրառությունը-արաբանախշ, զարդերիզ, պարտեր:

Պենստեմոն - Penstemon Schmidel. — Пенстемон



Նկարագրությունը-խլածաղկազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ, թույլ ճյուղավորված ցողուններով, մինչև 100 սմ բարձրության բազմամյա ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է ավելի քան 100 տեսակ, որոնք տարածված են Մեքսիկայում, Ամերիկայում և Արևելյան Ասիայում: Ծաղկաբուծության մեջ տարածված են մորուքավոր, զանգականման և հիբրիդային պենստեմոնները: Տերևները խոշոր են, ամուր, մերձարմատայինները՝ երկարավուն, մյուսները՝ նշտարաձև: Ծաղիկները տարբեր մեծության են, կախված, երկշրթանի, ունեն սպիտակ, վարդագույն, կարմիր, երկնագույն, մանուշակագույն երանգ: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, լուսասեր, խոնավասեր, լավ է աճում պարարտ հողերում: Տնկում են բույսը բույսից 15-20սմ հեռավորության վրա: Ոռոգումը կատարվում է շաբաթը 2-3 անգամ: Սերմերը հավաքում են ծաղկելուց հետո:

Բազմացումը-կատարվում է սերմերով և թուփը կիսելով, սերմերի ցանքը կատարում են ծածկած գրունտում հունվարի առաջին կեսին: Սերմերը ծլում են 20-25օրում:

Կիրառությունը-խառը ածու, առանձնյակ, քարապարտեզ, լանդշաֆտային ծաղկանոց, մորիբանա, ծաղկեփունջ:

Պուշկինիա - Puschkinia Adam. - Пушкиния



Նկարագրությունը-շուշանագգիների ընտանիքին պատկանող, սոխուկավոր, վարդակավոր գեղազարդ ծաղկաբույս է:Գիտությանը հայտնի է ընդամենը 2 տեսակ, որոնք աճում են Փոքր ու Առաջավոր Ասիայում և Կովկասում: Սոխուկը ծվածն է կամ կլորավուն, տերևները՝ 2-3 հատ, գծանման: Ծաղիկները զանգականման են, կանոնավոր, գեղեցիկ ու հոտավետ, հավաքված ողկուզանման ծաղկաբույլերում, ծաղկում են վաղ գարնանը 20-25 օր տևողությամբ:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, լուսասեր, փարթամորեն աճում է հումուսով հարուստ, ջրաթափանց հողերում:Խորհուրդ է տրվում սերմերը ցանել հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ողղակի բաց գրունտում:

Բազմացումը-իրականացվում է սերմերով և դուստր սոխուկներով ուշ աշնանը, առաջին դեպքում բույսը ծաղկում է 3-4 տարում, իսկ երկրորդ դեպքում՝2-3 տարում:

Կիրառությունը-քարապարտեզ, ալպիական այգի, առանձնյակ, գարնանային ձևավորում,ծաղկեփունջ:

Ջղաշուշան (Յոստա) - Funkia spreng. – Функия



Նկարագրությունը- շուշանագիների ընտանիքին պատկանող տերևագեղազարդ, 25-50սմ բարձրության կոճղարմատավոր, վարդակավոր ծաղկաբույս է:Հայտնի է մոտ 10 տեսակ ջղաշուշան, որի հայրենիքը ճապոնիան է, Չինաստանը և Հեռավոր Արևելքը: Ծաղկաբուծության մեջ լայն տարածում ունեն նշտարատերևավոր, ալիքատերև և Ջիբոլդի ջղաշուշանները իրենց բազմաթիվ տարատեսակներով ու պարտիզային հիբրիդներով:Տերևները չափազանց գեղեցիկ են, խայտաբղետ, ալիքավոր, կանաչավուն կամ կանաչադեղնավուն, խոշոր` 10-20 սմ երկարության, ունեն արծաթափայլ եզրեր:Ծաղիկները մանր են, հավաքված ողկուզման ծաղկաբույլերում, ունեն բաց մանուշակագույն կամ կապտամանուշակագույն գունավորում, ծաղկում են հունիս-հուլիս ամիսներին 25-35 օր տևողությամբ:

Մշակությունը-սովորատար է, խոնավասեր, կաշենման տերևներ ունեցող տեսակաները համեմատաբար լուսասեր են: Հողի նկատմամբ քիչ պահանջկոտ են, սակայն նախընտրում են աճել օդաթափանց, հումուսով հարուստ ճմահողերում: Թուփը տնկում են գարնանը կամ սեպտեմբերի 2-րդ կեսին: Թուփը նույն տեղում կարելի է թողնել շուրջ 10 տարի:

Բազմացումը-կատարվում է թուփը կիսելով, արմատային և ցողունային կտրոններով: Թփերը կիսում են ապրիլի 2-րդ կեսին յուրաքանչյուրի վրա թողնելով 1-2 տերևային վարդակ: Ցողունային կտրոնավորումը կատարվում է մայիսին, տերևային մակերեսի 40-50%-ի կրճատումով, իսկ արմատայինը`աշնանը կամ գարնանը:

Կիրառությունը-գարդերիզ, սոլիտեր, քարապարտեզ, պարտեր, լանդշաֆտային և ինտերիերային կոմպոզիցիաներ:

Ռուդբեկիա - Rudbeckia L.- Рудбекия



Նկարագրությունը-աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող ուղղաձիգ, ճյուղավորված, մինչև 2մ բարձրության, կոճղարմատավոր, միամյա կամ բազմամյա ծաղկաբույս է:Գիտությանը հայտնի է մոտ 30 տեսակ, որոնք աճում են Հյուսիսային Ամերիկայում:Ծաղկաբուծության մեջ բազմամյա ռուդբեկիաներից լայն կիրառություն ունեն կտրտված տերևավոր, ալ կարմիր, շքեղ, փայլուն և հիբրիդային տեսակները` իրենց բազմաթիվ սորտերով ու պարտիզային հիբրիդներով:Ծաղիկները խոշոր են, մինչև 10 սմ տրամագծով, կիսալիաթերթ կամ լիաթերթ, ուռուցիկ կենտրոնով, որոշ տեսակների մոտ` գնդաձև, ունեն դեղնավուն, ոսկեդեղնավուն, նարնջագույն,

ծիրանագույն և նարնջակարմրավուն գունավորումներ:Ծաղկում է հուլիս-հոկտեմբեր ամիսներին:

Մշակությունը-լուսասեր է, ջերմասեր, խոնավասեր, ցրտադիմացկուն, հողի նկատմամբ չափավոր պահանջկոտ:Տնկում են բույսը բույսից 30-40սմ հեռավորության վրա: Ոռոգում են շաբաթը 2 անգամ:

Բազմացումը-կատարվում է սերմերով և թուփը կիսելով:Սերմերի ցանքը կատարվում է ծածկած գրունտում հունվարին,իսկ բաց գրունտում`գարնանը կամ աշնանը: Սերմերը ծլում են 20-25 օրում: Թուփը կարելի է կիսել ինչպես գարնանը,այնպես էլ աշնանը:

Կիրառությունը-խառը ածու, ծաղկաթունք, առանձնյակ, լանդշաֆտային ծաղկանոց, մորիբանա:

Վարդակակաչ -Tulipa L. - Тюльпан



Նկարագրությունը- շուշանագգիների ընտանիքին պատկանող չափազանց գեղեցիկ, բազմերանգ, 10-50սմ բարձրության, սոխուկավոր ծաղկաբույս է:Գիտությանը հայտնի է շուրջ 150 տեսակ, որոնք աճում են Եվրասիայի կիսաանապատային, տափաստանային և լեռնային գոտիներում, 6-ը` Հայաստանում:Հիբրիդային վարդակակաչները որպես կանոն ավելի խոշոր են` մինչև 90սմ բարձրության, ունեն խոշոր, մինչև 10սմ երկարության ու 5-7սմ լայնության, բազմերանգ, բազմաձև կիսալիաթերթ, լիաթերթ միատոն կամ խայտաբղետ ծաղիկներ:Ծաղկում են ապրիլ-մայիս ամիսներին շուրջ 15 օր տևողությամբ:

Մշակությունը-լուսասեր է, խոնավասեր, նախընտրում է աճել մշակված, սննդանյութերով հարուստ, թեթև, կավավազային կամ ավազակավային հողերում: Սոխուկները հողում տնկում են հոկտեմբեր ամսին սոխի մեծության եռապատիկ խորությամբ և մեկը մյուսից 15-20սմ հեռավորության վրա:Տեղումների բացակայության դեպքում անհրաժեշտ է ոռոգել:

Բազմացումը-հիմնականում կատարվում է սոխուկներով, երբեմն` նաև սերմերով: Սոխուկները հողից հանում են կամ ամեն տարի, կամ 2 տարին մեկ` գարնան վերջին կամ ամռան սկզբին, երբ տերևները ամբողջովին դեղնում են, որից հետո տեսակավորում են, պահում հատուկ նկուղներում:

Կիրառությունը-առանձնյակ, քարապարտեզ, ածու, պարտեր, գորգային ծաղկաթունք, ծաղկեփունջ, մորիբանա, իքեբանա:

Քաջվարդ - Paeonia L. – Пион



Նկարագրությունը-քաջվարդագիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ ցողուններով, 60-100սմ բարձրության, կոճղարմատավոր, բազմամյա ծաղկաբույս կամ մինչև 2մ բարձրության ծառանման թուփ է:Հայտնի է քաջվարդի շուրջ 45 տեսակ, որոնք հիմնականում տարածված են Արևադարձային Ասիայում և Հարավային Եվրոպայում:Ծաղիկները հիմնականում լիաթերթ են, խոշոր, հիմնականում՝ մեկական, ունեն 8-15սմ տրամագիծ, հաճախ՝ սուր, դուրեկան բուրմունք:Ծաղիկները լինում են սպիտակ, վարդագույն, բաց դեղնավուն և մուգ կարմիր:Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին մոտ 20 օր տևողությամբ:Ծառանման քաջվարդը մոնոտիպ է, որի ծաղիկներն ավելի խոշոր են՝ 15-20սմ և ավելի, ունեն սպիտակավուն, վարդագույն կամ մանուշակագույն գունավորում, հոտ չունեն, ծաղկում են հուլիսին:

Մշակությունը-լուսասեր է, խոնավասեր, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ, տնկում են բույսը բույսից 50-80սմ հեռավորության վրա:Կոճղարմատները չպետք է խորը տնկել.աչքերը պետք է ծածկված լինեն 4-5սմ հողով, հակառակ դեպքում թուփը մի քանի տարի չի ծաղկի:Ոռոգումը իրականացվում է շաբաթը մեկ անգամ:

Բազմացումը-կատարվում է սերմերով, անդալիսով և կոճղարմատը կիսելով: Ամենատարածված ձևը վերջինն է.սուր դանակով կոճղարմատները բաժանում են 4-6 աչք ունեցող մասերի, կտրվածքները մշակում փայտածխի փոշով և վերատնկում:

Կիրառությունը-առանձնյակ, խառը ածու, ծաղկեփունջ, իքերանա, մորիբանա:

Քրիզանթեմ - Chrysanthemum L. - Хризантема



Նկարագրությունը - աստղածաղկազգիների ընտանիքին պատկանող, ուղղաձիգ, ճյուղավորված ցողուններով, 30-120սմ բարձրության, միամյա, բազմամյա, կիսաթփային կոճղարմատավոր ծաղկաբույս է: Հայտնի է ավելի քան 150 տեսակ քրիզանթեմ, որոնք առավելապես հանդիպում են Չինաստանում, ճապոնիայում և Կորեայում: Տերևները հասարակ են, ամբողջական կամ կտրտված, բլթակավոր, բաց կամ մուգ կանաչավուն, երբեմն՝ պատված մոխրավուն խավով: Ծաղիկները մանր են, հավաքված փոքր կամ մեծ զամբյուղանման ծաղկաբույլերում, ունեն գանազան գունավորումներ: Ծաղկում է հուլիս-նոյեմբեր ամիսներին:

Մշակությունը-Լուսասեր է, վատ չի աճում նաև կիսաստվերում: Նախընտրում է աճել պարարտ, չափավոր խոնավ հողերում: Մանրածաղկավոր և գնդաձև թփերը տնկում են բաց գրունտում ապրիլ-մայիս ամիսներին: Ոռոգում են շաբաթը 2-3 անգամ:

Բազմացումը - իրականացվում է թուփը կիսելով և ցողունային կտրոններով, իսկ սերներով՝ միայն սելեկցիոն նպատակներով: Թուփը կիսելու ամենալավ ժամանակը աշունն է՝ հոկտեմբերը:

Կիրառությունը-Ածու, խառը ածու, աշնանային ծաղկաթունք, լանդշաֆտային ծաղկանոց, ծաղկեփունջ, մորիբանա:

Քրքում - Crocus L. - Шафран



Նկարագրությունը-հիրիկազգիների ընտանիքին պատկանող վարդակավոր, մինչև 20սմ բարձրության, պալարասոխուկավոր, բազմամյա ծաղկաբույս է: Գիտությանը հայտնի է շուրջ 80 տեսակ, որոնք տարածված են միջերկրածովյան երկրներում, Միջին Եվրոպայում, Ասիայում, Կովկասում և Ղրիմում: Քրքումի տերևները նեղ են, երկարավուն, որոշ տեսակները՝ սպիտակավուն շերտագծերով: Ծաղիկները միայնակ են, ձագարանման, մինչև 3,5սմ երկարության, ունեն սպիտակավուն, դեղնավուն, նարնջագույն, մանուշակագույն և կապտավուն գունավորում: Ծաղկում է գարնանը՝ մարտ-ապրիլ ամիսներին, կամ աշնանը՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 20-30 օր տևողությամբ:

Մշակությունը-ցրտադիմացկուն է, խոնավասեր, լուսասեր, երբեմն կիսաստվերատար, նախընտրում է աճել պարարտ, թեթև կավավազային հողերում:

Սոխուկները տնկում են աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մեկը մյուսից 5-10սմ հեռավորության վրա:

Բազմացումը-կատարվում է սոխուկներով և սերմերով գարնանը, որոշ տեսակների բազմացումը աշնանը:Ծաղկելուց հետո սոխուկները հանում են, տեսակավորում և նախապատրաստում վերատնկման:

Կիրառությունը- քարապարտեզ, ալպիական այգի, առանձնյակ, ածու, գորգային ձևավորում:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Զ.Ա. Միամյա ծաղկաբույսերի մշակությունը, Երևան, 1961թ, 107էջ:
2. Գրիգորյան Արծ.Ա.Գեղազարդ պարտիզագործություն, Երևան, 2010թ, 275էջ:
3. Գրիգորյան Արծ. Ա., Զիրոյան Ա.Ն. Հայաստանի բազմամյա գեղազարդ խոտաբույսերը, Երևան, 1994թ, 150էջ:
4. Նարինջյան Հ.Ե.Ծաղկաբուծություն և դեկորատիվ այգեգործություն, Երևան, 1975թ, 518էջ:
5. Гитун Т.В. Цветы, букеты и композиции, Москва, 2005г., 286ст.:
6. Кисилев Г.Е. Цветоводство, Москва, 1952г., 973ст.:
7. Приходко С.Н., Яройенко Л.М., Червченко Т.М. и др. Декоративные растения открытого и закрытого грунта, Киев, 1985г., 521ст.:
8. Хессайон Д.Г. Все о клумбовых растениях, Москва, 1998г., 140ст.:

Բովանդակություն

Ներածություն.....	3
Լաբորատոր-գործնական պարապմունք 1	
Ծաղկաբուծության մեջ օգտագործվող հողերն ու հողախառնուրդները.....	4
Լաբորատոր-գործնական պարապմունք 2	
Ծաղկաբուծական տնտեսություններ.....	6
Լաբորատոր-գործնական պարապմունք 3	
Ծաղկաբույսերի բազմացումը և ցանքսը.....	8
Լաբորատոր-գործնական պարապմունք 4	
Ծաղկաբույսերի կենսաձևերը.....	9
Լաբորատոր-գործնական պարապմունք 5	
Կանաչ տնկարկների զարդերը.....	11
Լաբորատոր-գործնական պարապմունք 6	
Ծաղիկների արժանիքները.....	17
Ծաղիկների մինի ատլաս.....	21
Լաբորատոր-գործնական պարապմունք 7	
Միամյաներ.....	21
Լաբորատոր-գործնական պարապմունք 8	
Երկամյաներ.....	47
Լաբորատոր-գործնական պարապմունք 9	
Բազմամյաներ.....	53
Գրականություն	78

Արծվի Արտաշեսի Գրիգորյան

ԾԱՂԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2014

Григорян Арцви Арташесович

ЦВЕТОВОДСТВО
Учебное пособие

Ереван 2014

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝
Ս.Ա.Գրիգորյանի